



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## Պայքար հանուն արժանապատվության, արդարության եւ իրավունքների վերականգնման

Հունիսի 15-ին ՀՀ 2021թ. պետքայուցի կատարողականի ներկայացման եզրափակիչ ելույթի առիթն օգտագործելով՝ վարչապետի պաշտոնը զբաղեցնող Նիկոլ Փաշինյանն ամբողջությամբ շեղվելով օրակարգից, ՀՀ ԱԺ ամբիոնից հերթական անգամ փորձեց արդարանալ: Նախելառաջ, Փաշինյանը վկայակոչեց ՀՀ բյուջեի հաշվին Արցախին գումարներ հատկացնելու փաստը ներկայացնելով որպես քա-ական թիմի կողմից Արցախը ուշադրության կենտրոնում պահելու եւ Արցախից չհրաժարվելու վկայություն:

ՀՀ-ի կողմից միշտ էլ պետական վարկի անվան տակ գումարներ են հատկացվել Արցախի Հանրապետությանը, միջին հաշվով՝ դա կազմել է ԱՀ պետքայուցի 50%-ի չափով: Տրամաբանական է, որ պատերազմի հետեւանքների վերացման համար այդ հատկացումները պետք է ավելանային: Ճիշտ է, այժմ ԱՀ բյուջեի մոտ 70%-ն է պետական վարկի անվան տակ տրամադրվում Արցախին, սակայն պետք է հաշվի առնել, որ Արցախի տնտեսությունը զրկվել է իր եկամուտներն ապահովելու հնարավորություններից հենց պատերազմի պատճառով: Ֆինանսների հատկացման նիշոցով ինչ-որ արդարացումներ գտնելը, կամ այդ միջոցով հասարակության մտայնության վրա ազդելու քաղաքականությունը հիշեցնում է 1988թ. Ադրբեջանի կողմից ԼՂԻՄ-ին տրվող բյուջեն մի քանի անգամ ավելի դարձնելը, որն այն ժամանակ արժանացավ հայ ժողովրդի համապատասխան հակազդեցությանը: Հայրենի հողը նյութական գաղթականությամբ չի վաճառվում:

Փաշինյանի չքննարկած ճառի երկրորդ բաժինն ուղղակի պատասխան էր Դիմադրության շարժմանը: Նա փորձեց Արցախը Ադրբեջանի կազմում պատկերացնելու քա-ական մոտեցումների նախադեպերը վերագրել նախորդ երկու նախագահներին եւ դրան զուգահեռ ջանասարձակ «պախարակել» Դաշնակցությանը, որ իբր ժամանակին համագործակցելով վերոնշյալ նախագահների ձեռնարած կառավարությունների հետ, անուղղակի իր համաձայնությունն է տվել բանակցությունների սեղանին դրված ձեռնարկումներին:

Նախելառաջ պետք է նշել, որ բանակցությունների առարկա որեւէ մոտեցում կամ տեսակետ չի կարող ամբողջությամբ արտահայտել տվյալ հարցի վերաբերյալ որեւէ կողմի ընկալումը, քանի դեռ բանակցությունների արդյունքում ձեռնարկվող որեւէ փաստաթուղթ չի կնքվել: Այդ առումով անհիմն են բանակցությունների բովանդակության վրա հիմնված փաստարկների խեղաթյուրված եզրահանգումները, որոնք հնչել են Փաշինյանի կողմից: Իսկ առավել ցավալին այն է, որ այդ հատվածում Փաշինյանն այս էլ որբորդ անգամ հիմնահարցի դրույթների վերաբերյալ ներկայացնում է ոչ թե հայկական կողմի փաստարկներն ու մոտեցումները, այլ կրկնում է Ալիևի՝ ադրբեջանական կողմի բանակցողի մոտեցումներն ու փաստարկները: Փաշինյանի այս սեթեւեթանքը աղետաբեր է բանակցությունների հետագա ընթացքում հայկական շահը պաշտպանելու տեսանկյունից:

Վերոնշյալ պաշտպանվողական ճառը իր հերթին ապացուցում է նաեւ մեկ հանգամանք, որ Դիմադրության շարժման վերջին 50 օրերի ակտիվ գործողությունները կարողացել են կուտակել մի ներուժ, որին հակազդելն օրախնդիր է եղել ՀՀ իշխանական աթոռները զբաղեցնողների համար:

Դիմադրության շարժումը, հատկապես վերջին երկու ամիսների ընթացքում, ձեռնարկել է գաղափարի շուրջ լայն համախմբում՝ հանրային տարբեր շերտերի ու շրջանակների աջակցությամբ: Այդ համախմբման շնորհիվ ապացուցվել է, որ օրվա իշխանությունները նոր գիշումների գնալու համար չունեն ժողովրդի կողմից տրված մանդատ: Իսկ ամենակարեւորը՝ Դիմադրության շարժումն ի լուր աշխարհի ապացուցեց, որ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը չի մարել, դա պայքար է հանուն արժանապատվության, պայքար է հանուն արդարության եւ իրավունքների վերականգնման:



## Դիմադրության շարժումը նոր մարտավարությամբ

Երկու շաբաթ՝ սկսած մայիսի մեկից, «Դիմադրություն» շարժումը Երեւանում իրականացնում է անհնազանդության ակցիաներ, երթեր, հանրահավաքներ: Հունիսի 1-14-ը եւս Երեւանում շարունակվել են «Դիմադրություն» շարժման անհնազանդության եւ իրազեկման ակցիաները, որոնք իրականացվում էին տարբեր ձեւերով: Տեղի են ունեցել կանանց ու երեխաների, երիտասարդների երթեր, որոնք ուղեկցվում էին զանազան բողոքի ակցիաներով:

Այս ընթացքով շարժման մասնակիցները նաեւ բողոքի ակցիաներ են ունեցել ՀՀ կառավարության, ՀՀ նախագահի նստավայրի, ՀՀ ԱԳՆ, ԵՄ դեսպանատան շենքերի դիմաց, որտեղ այդ պահերին գտնվում էին արտերկրից ժամանած քաղաքական տարբեր գործիչներ:

Հունիսի 2-ին Իշխան Սաղաթեյանը հայտարարել է, որ շարժումը կարելու է հանգրվանի է մոտենում: Նույն օրը 15 կուսակցություններ զորակցություն են հայտնել եւ միացել «Հայ-ադրբեջանական եւ հայ-թուրքական հարաբերությունների կապակցությամբ» ԱԺ ընդդիմադիր խմբակցությունների հայտարարությանը:

Հունիսի 6-ին «Դիմադրություն» շարժման կազմակերպիչները հանդիպել են Արցախի Հանրապետության ընդդիմադիր քաղաքական ուժերի ղեկավարների հետ: Ըննարկվել են Արցախի ու Հայաստանի շուրջ ստեղծված մարտահրավերներն ու սպառնալիքները, ինչպես նաեւ Հայաստանում առկա քաղաքական ճգնաժամի դրսևորումները:

Հունիսի 6-ի հանրահավաքի ընթացքում Ի. Սաղաթեյանն ընդգծեց՝ պայքարին միացել է նաեւ Սփյուռքը: Վերջին մեկ ամսվա ընթացքում Սփյուռքի տարբեր գաղթօջախներում Դիմադրության շարժման օջախներ են ձեռնարկվել, բազմաթիվ գաղութներում երթեր, ցույցեր հանրահավաքներ են տեղի ունեցել:

«Այսինքն, այս կարելու փաստը՝ Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը ամբողջությամբ վերականգնելու ենք», - ասաց Իշխան Սաղաթեյանը:

Հունիսի 8-ին Լոս Անջելեսում եւ Ստեփանակերտում բողոքի ակցիաներ են իրականացվել Սփյուռքի հանձնակատար Չարեհ Սինալյանի եւ ՀՀ վարչապետի հատուկ հանձնարարություններով դեսպան Էդմոն Մարուքյանի դեմ:

Հունիսի 13-ին «Փաստինֆո»-ի եթերում Ի. Սաղաթեյանն ասաց, որ շարժումը կավարտվի միայն այն դեպքում, երբ Փաշինյանը կհեռանա, սակայն շարժումը փոխում է ռազմավարությունը, եւ եղանակային շոգ պայմաններից ելնելով՝ կլինի գործողությունների նոր մարտավարություն, քայլերի նոր ծրագիր:

«Հետ քայլ չկա, շարունակելու ենք մեր պայքարը, եւ վստահ եղեք, որ իր հաղթական ավարտին հասնելու է այս շարժումը», - վստահեցրել է բանախոսը:

Հունիսի 14-ին Ֆրանսիայի հրապարակում տեղի ունեցած համազգային հանրահավաքին Ի. Սաղաթեյանը հանդես է եկել ելույթով, որտեղ նշել է ունեցած ձեռքբերումների, թույլ տված սխալների եւ առաջիկա անելիքների մասին:

«Ողջույն, սիրելի՛ հայրենակիցներ: Այսօր այստեղ ենք մի շարք կարելու հարցերի պատասխանելու, որոշումներ ընդունելու համար: Միասին:

Այդ որոշումները պետք է ապահովեն մեր Շարժման հետագա ընթացքը, զարգացումը, նպատակների վերջնական իրագործումը:

Նպատակը նույնն է՝ կանխել Արցախի հայաթափումը եւ Հայաստանի թուրքացումը, չեզոքացնել Հայաստանի ինքնիշխանությանը սպառնացող վտանգները, իսկ դրան հասնելու համար նախ պետք է հեռացնել չարիքի իշխանությունը, ձեռնարկել ազգային իշխանություն, որը կկատարի պետականության կործանման այս ընթացքը, որը կապահովի երկրի սահմանների անձեռնմխելիությունը եւ տարածքային ամբողջականությունը, կհաստատի արժանապատիվ խաղաղություն, պետականությունը կվերադարձնի ժողովրդին, Հայաստանը կդարձնի արժանապատիվ եւ բարեկեցիկ երկիր: Ուստի Շարժման նպատակը եւ առաքելությունը սրբազան են, ու քանի դեռ վերը նշված հարցերը չեն լուծվել, Շարժումը դադար չունի:

Բայց սկզբի համար պետք է հասկանանք, թե ինչ ունենք այս փուլում, որտեղ ենք հասել, ինչ բացթողումներ եւ ձեռքբերումներ կան, որոնք են ստեղծված իրավիճակի առանձնահատկությունները:

Սիրելի՛ հայրենակիցներ, կարելու է հասկանալ, թե այս ընթացքում ինչ է արել այս հրապարակում կանգնած յուրաքանչյուր արժանապատիվ քաղաքացի: Ես այստեղ ուզում եմ շատ անկեղծ լինել:

2021թ. ընտրություններից հետո Հայաստանում ստեղծվել էր մի վիճակ, երբ երկրի գլխավոր պաշտոնը զբաղեցնող անձը երկրի թիվ մեկ քաղաքական ամբիոնից շարունակ նվաստացնում էր Հայաստանն ու Արցախը, նվաստացնում էր հայ մարդուն, բայց դրան չէր հետեւում հանրային արձագանք, ավելին՝ նա ասում էր, որ դրա համար ժողովրդից մանդատ ունի:

Մենք ունեինք մի վիճակ, երբ միջազգային գործընկերները կարծում էին, թե Հայաստանում վարվող քաղաքականության հանդեպ չկա դիմադրություն:

### Դիմադրության շարժումը նոր մարտավարությամբ

1 ← Մենք ունենք մի վիճակ, երբ Հայաստանից լսվում էր միայն ամոթի եւ պարտության ձայնը:

Եվ ի՞նչ ունեցանք մենք հիմա, մեր այս օրերի արձանագրած արդյունքները:

1. Լաոն /հասարակությունը/ արթաթափ: Միայն պետական կուրությամբ տառապողը կարող է սա չկատել:

2. Վերջնականապես փակվեց այն հարցը, թե Արցախի եւ Հայաստանի անվտանգությունը հետաքրքրում է հանրության փոքր շերտերին: Մենք այդ հարցին հստակ պատասխանեցինք: Տասնյակ հազարավոր մարդիկ դուրս եկան փողոց: Եթե մինչ այդ մարդիկ հուսահատված էին, որ իրենք քիչ են, համախմբված չեն, ապա Շարժումը համախմբեց մեր հանրության տարբեր շերտերին, մենք ապահովեցինք համախմբման, միասնության ու համերաշխության մթնոլորտ, մենք, բոլորս միասին, համոզվեցինք, որ մենք հզոր ուժ ենք եւ կարող ենք իրավիճակ փոխել:

3. Միջազգային հանրությունը հասկացավ, որ այստեղ կա արժանապատիվ ժողովուրդ, որին չի կարելի ցանկացած լուծում ու զիջում պարտադրել:

4. Ձեռավորվեց ազգային գաղափարի շուրջ լայն համախմբում՝ հանրային տարբեր շերտերի ու շրջանակների աջակցությամբ: Այս հրապարակը դարձավ գործոն:

5. Թե՛ երկրի ներսում, թե՛ արտաքին աշխարհի համար փաստվեց, որ օրվա իշխանությունները չունեն երկիրը նոր գիշումների տանելու՝ ժողովրդի մանկատը:

6. Ամբողջությամբ կազմաքանդվեցին գործող իշխանության քաղաքական եւ սոցիալական հիմքերը: Իշխանության միակ հենարանը մնացել է ԶՊ-ական նեղ շրջանակը եւ ոստիկանական բիրտ ուժը:

7. Հանրային խոսույթում վերջնականապես ձեռավորվեցին այն առաջնահերթությունները, որոնք պետք է ընկած լինեն հայկական պետականությունների հիմքում:

8. Որքան էլ վարչախումբը հետպատերազմական ժամանակաշրջանում փորձեց հանրությանը տրամադրել նոր պարտություն եւ աշխարհին համոզել, թե հայերը հաշտվել են տեղի ունեցածի հետ, մենք մեր Շարժումով հակառակն ապացուցեցինք: Մենք ցույց տվեցինք, որ ունենք մեր 5000-ամյա երթը շարունակելու կամք, վճռակալություն եւ ներուժ:

9. Հայ ժողովուրդը սկսեց հաղթահարել պատերազմում ջախջախիչ պարտության հոգեբանական հետեւանքները եւ կրկին բարձրաձայնել իր ազգային պահանջները:

10. Գծվեց հստակ շրջաժամը, մեր ժողովրդի 90 տոկոսը բացառապես հայտարարեց՝ Արցախը չի կարող լինել Ադրբեյջանի կազմում:

11. Շարժումն առնվազն այս պահին կանխեց եւ խախտեց նոր կապիտուլյացիա ստորագրելու ժամանակացույցը, եւ դրանով է պայմանավորված Ալիեւի անհանգստությունը:

12. Մեր Շարժումն սկսեց ոտքի հանել արցախահայությանը, Սփյուռքը եւս ոտքի կանգնեց: Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը վերականգման փուլում է:

13. Զաղաքական ճգնաժամը դրսևորված է եւ փաստ, որքան էլ փորձեն այն քողարկել: Նիկոլի հեռացման համար կա ձեռավորված հստակ հանրային պահանջ:

Մի կարեւոր ձեռքբերում էս, որի մասին քիչ ենք խոսում: Միքելի՛ հայրենակիցներ, այս բոլոր օրերի ընթացքում, հենց այս պահին, մեր աչքի առաջ, մեր ակտիվ մասնակցությամբ, ձեր նվիրվածության եւ կամքի շնորհիվ ձեռավորվում է բյուրեղանում է ազգային ու պետական կորիզը: Այս կորիզը դառնալու է նոր որակի հայկական պետականության հիմքը, այս կորիզը դառնալու է մեր պետության իմունիտետը, որը պաշտպանելու է մեզ ամեն տեսակ վարակներից ու հիվանդություններից:

Միքելի՛ հայրենակիցներ, սրանք բոլորը ձեր ձեռքբերումներն են: Ընդամենը երկու ամիս առաջ շատ քչերն էին հավատում, որ մենք կարող ենք այսքան բան անել միասին: Ձեզանից յուրաքանչյուրն իր հավատով, նվիրվածությամբ, պայքարի ոգով, ինքնազոհաբերությամբ ու վճռակալությամբ իրավիճակ փոխեց ոչ միայն Հայաստանում, այլեւ տարածաշրջանում, աշխարհասփյուռ հայերի շրջանում: Սա մեծ աշխատանք է, որ դուք եք արել:

Սակայն մեր գլխավոր խնդիրը շարունակում է մնալ չլուծված: Հայաստանը դեռեւս ղեկավարում է մեր բոլորի համար գոյաբանական վտանգ ներկայացնողը:

Այս օրերի ընթացքում մենք արել ենք ամեն ինչ, որ նա վերջապես հեռանա՝ դրանով հնարավորություն տալով Հայաստանին ու հայ ժողովրդին ապրելու:

Ցանկացած այլ իշխանության համար եղածն ավելի քան բավարար կլիներ, որ հեռանար: Սակայն սրանք կրկին փաստեցին, որ իրենց աթոռի համար պատրաստ են նոր արյուն թափել:

Միքելի՛ հայրենակիցներ, մենք այս ողջ ընթացքում

առաջնորդվել ենք բացառապես խաղաղ ակցիաներ իրականացնելու սկզբունքով: Մենք հայտարարել ենք, որ չենք գնալու արյունահեղության ճանապարհով: Մենք հայտարարել ենք, որ մեր հոգին չի փառավորվում ոստիկանին մահակներով հարվածելուց, արյունահեղություն կազմակերպելուց:

Եթե որեւէ մեկը մեզ սրա համար պետք է մեղադրի վճռակալության բացակայության մեջ, ուղիղ հայտարարում եմ՝ այո, մենք չունենք հայ սպանելու վճռակալություն: Մենք հեռացնելու ենք Նիկոլին, հեռացնելու ենք հաստատ, բայց դա անելու ենք անարյուն:

Միքելի՛ հայրենակիցներ, առաջին օրվանից մենք հստակ դրել էինք մեր նպատակը եւ ընտրել մարտավարություն, որը մեզ թույլ էր տալու կոնկրետ ժամանակամիջոցում հասնել այս նպատակին: Ես պետք է արձանագրեմ, որ մեր պլանավորած քայլերը մենք իրականացրել ենք ամբողջովին:

Սակայն այս իշխանությունների բացառիկ լախրությունը, ցնկիզմը, աշխարհաքաղաքական իրավիճակը իրենց ազդեցությունն են թողնում մեր ծրագրերի վրա եւս:

Ոստի մենք հիմա կանգնած են մարտավարության փոփոխության անհրաժեշտության առաջ: Մեզ հարկավոր է ստեղծված նոր իրավիճակին համապատասխան մարտավարություն, որը թույլ կտա հասնել մեր առջեւ դրված նպատակին:

Բայց, մինչ այդ, ուզում եմ խոսել նաեւ Շարժման բացթողումների մասին:

Առաջինը. պետք է արձանագրել, որ Նիկոլին չընդուն



նող եւ մեծող մարդկանց թիվը շատ ավելի մեծ է, քան այս հրապարակում գտնվողներին: Մենք դեռ չենք կարողացել այդ բոլոր մարդկանց փողոցային պայքարի դուրս հանել, բերել այս հրապարակ: Սա շատ կարեւոր խնդիր է, որն անպայման պետք է լուծել:

Երկրորդը. դեռ կան մարդիկ, որոնք կարծում են, թե սա պայքար է իշխանության համար, պայքար է Նախկինի վերադարձի համար: Սա վկայում է, որ մենք չենք կարողացել երկրին սպառնացող վտանգները հստակ բացատրել մեր քաղաքացիներին: Իհարկե, մենք պետք է նաեւ գիտակցեցնեք, որ գործ ունենք պետական հսկա ռեսուրսի, օտարերկրյա ցանցերի քարոզչական համակարգերի հետ, որոնք անընդհատ խաբում եւ մոլորեցնում են մեր քաղաքացիներին: Բայց, միեւնույն է, մենք պետք է կարողանանք հաղթահարել նաեւ այդ արգելքը եւ ժողովրդի այն հատվածին, որը կարծում է, թե սա իշխանության պայքար է, հստակ հասցնենք մեր շարժառիթները, բացատրենք, որ երկիրն իսկապես կործանման վտանգի առջեւ է:

Ունեցել ենք նաեւ կազմակերպական բնույթի խնդիրներ: Ծիշտ է, այստեղ բավական լուրջ աշխատանք է արվել, բայց ակնհայտ է, որ թերացումներն էլ են շատ եղել: Դրանք եւս առաջիկա օրերին պետք է արագ շտկենք:

Միքելի՛ հայրենակիցներ, Շարժան ներուժը մեծացնելու, աշխարհագրությունը ընդլայնելու, գործիքակազմը հարստացնելու, նոր մոտեցումներ որդեգրելու, հարթված ընդլայնելու, հստակ գործողությունների ծրագրով պայքարը շարունակելու նոր հանգրվանի առջեւ ենք:

Նախ, անհրաժեշտ է որոշակի վերափոխման ենթարկել «Դիմադրություն» շարժման կառուցվածքը եւ մարտավարությունը՝ միաժամանակ կապիտալիզացնելով արձանագրած ձեռքբերումները:

Ըստ այդմ՝

1. Անհրաժեշտ է ինստիտուցիոնալ բնույթ հաղորդել շարժմանը՝ քաղաքական, կազմակերպական, քարոզչական աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու համար:

2. Շարժմանը պետք է ցանցային բնույթ հաղորդել՝ կյանքի կոչելով տարածքային եւ ճյուղային կառուցվածքային միավորներ:

Սա իրենից ենթադրում է, որ Շարժումն ունենալու է ենթակառուցվածքներ, այսինքն՝ կոմիտեներ, ոլորտային հանձնախմբեր. սրանով մենք լուծելու ենք քաղաքական, կազմակերպական, քարոզչական ուղղություններով կարգային ներուժը մեծացնելու, նորանոր խմբերի ու կարող անհատների ընդգրկելով՝ Շարժումն ավելի ընդլայնելու եւ նոր ուժ տալու հարցը:

Իսկ հիմա, սիրելի՛ հայրենակիցներ, Շարժման առաջիկա անելիքների մասին: Նախ՝ այս հրապարակում տեղադրված վրանների մասին: Գիտեմ, որ այս թեմայով հարցադրումները շատ են, կարծիքներն էլ՝ տարբեր: Բայց պարզ իրողություններ կան, որ պետք է հաշվի առնենք: Եվ դրանցից ամենակարեւորն այն է, որ ամեն բան պետք է շատ հստակ նպատակի ծառայի:

Մենք վրանային ավանդ հիմնեցինք մշտական գործող հավաքատեղի, հասցե եւ դիմադրության առաջին օջախ ունենալու համար: Մենք այդ խնդիրը լուծել ենք գիշեր-ցերեկ այստեղ հերթապահություն իրականացնող մեր գաղափարակից ընկերների, բոլորիս համատեղ ջանքերի շնորհիվ:

Ֆրանսիայի հրապարակն այլեւս Դիմադրության շարժմանն է պատկանում, անկախ նրանից՝ այստեղ վրաններ կլինեն, թե ոչ: Եվ ոչ միայն Ֆրանսիայի հրապարակը: Մեր ժողովուրդն արդեն նվաճել է Հայաստանի բոլոր քաղաքների փողոցներն ու հրապարակները: Այս ողջ ընթացքում մենք ցույց տվեցինք, որ մեզ համար փակ փողոցներ գոյություն չունեն, այս պահի դրությամբ կարող ենք վստահ պնդել, որ վրանային այս ավանդ լիարժեք կատարել է իր գործը, որի համար շնորհակալ եւ երախտապարտ եմ այստեղ հերթապահած մեր բոլոր արժանապատիվ ընկերներին: Դուք նվիրյալներ եք եւ անգնահատելի գործ եք արել, բայց հիմա ձեր ներուժը մեզ այլ տեղերում է պետք:

Մենք առաջարկում ենք, հաշվի առնելով նաեւ մեր առաջիկա մարտավարությունը, վաղվանից հավաքել այս վրանները, բայց միշտ նկատի ունենալով, որ անհրաժեշտության դեպքում վրանային ավանդ կրկին կվերականգնվի: Մեր պայքարի ընթացքում մեր վրանների ավանդ լրջագույն հարց է լուծել, բայց մեր պայքարի հետագա արդյունավետությունը վրաններով պայմանավորված չէ. ովքեր հակառակն են մտածում, առաջիկա օրերին կհամոզվեն դրանում:

Շարժման անելիքները եւ դրանց ուղղված գործնական քայլերը պետք է բխեն առաջադրված նպատակներից ու խնդիրներից: Շարժման հետագա ծավալման արդյունքում պետք է պայմաններ ստեղծել, որպեսզի ա) կանխենք կենսական զիջումներ պարտադրող կապիտուլյացիոն նոր պայմանագրերի ընդունումը՝ բացառելով առանց ժողովրդի անմիջական մասնակցության որեւէ համաձայնության կայացում, բ) հասնենք Նիկոլի հեռացմանը՝ հրաժարականի կամ պաշտոնանկության միջոցով:

Պայքարը այս երկու ուղղություններով պետք է ընթանա զուգահեռ եւ լինի փոխլրացնող:

Շարժման որակական եւ քանակական մակարդակն է, որ ի վերջո կանխորոշելու է մեր պայքարի արդյունավետությունը: Հետեւաբար, թիրախային, հստակ պլանավորված քայլերով եւ գործողություններով պայքարը պետք է շարունակվի որոշակի փոփոխություններ կատարելով պայքարի ձեւերի ու եղանակների մեջ:

Այս առումով՝ առաջիկա մեր անելիքներն ու գործնական քայլերը միտված են լինելու հետեւյալին.

1. Ամենաառաջինը միջոցառումներ, այդ թվում՝ ցուցական փողոցային ակցիաներ, ոլորտային եւ թեմատիկ խնդիրների մասնագիտական քննարկումներ, ժողովրդային հանդիպումներ, շաբաթական առնվազն 1 մարզային այց, 1 մեծ հանրահավաք-երթ:

2. Շարժման տարածքային եւ ճյուղային ստորաբաժանումների ձեռավորում, այդ թվում՝ Արցախում եւ Սփյուռքում:

3. Հանրության լայն շերտերի, այդ թվում՝ գիտական, կրթական, հոգեւոր-մշակութային, գյուղացիության, բիզնես շրջանակների, երիտասարդության հետ հետեւողական աշխատանք:

4. Հստակ չափորոշիչների վրա հիմնված կարգային բանկի ձեռավորում, հաստատված՝ նոր սերնդից, նաեւ՝ Սփյուռքի մասնագիտական ներուժի ներգրավմամբ:

5. Մարզերում Շարժման կոորդինացիոն խորհուրդների ձեռավորում:

6. Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների եւ միջազգային կազմակերպությունների հետ հարաբերական աշխատանքներ:

7. Ապօրինաբար ձեռքբերված եւ կալանավորված՝ Շարժման մասնակիցների իրավունքների պաշտպանության ուղղությամբ հետեւողական քայլերի ձեռնարկում:

### Սփյուռքը ցանկանում է օր առաջ Արցախը ազատ տեսնել

Մայիսի 27-ից մինչև հունիսի 1-ը Լիբանանում եւ Կիպրոսում եր Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանի գլխավորած պատվիրակությունը: Պատվիրակության կազմում էին ԱԶ ԱԺ «Հայ Յեղափոխական Ղազնակցություն» խմբակցության ղեկավար Արթուր Մոսիյանը, ԱԶ արտաքին գործերի նախարարի տեղակալ Արմինե Ալեքսանյանը, ԱԺ նախագահի խորհրդական Կարեն Վանյանը: Այցի նպատակի, արդյունքների մասին «Ապառաժ»-ը գրուցել է ՀՀ Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ, ԱԶ ԱԺ ՀՀԴ խմբակցության ղեկավար Արթուր Մոսիյանի հետ:

**- Պարոն Մոսիյան, ի՞նչ նպատակ էր հետապնդում այցը, կարո՞ղ ենք ասել, որ այն հաջողված էր:**

- ԱԶ Ազգային ժողովում գործում է Կիպրոս-Արցախ բարեկամական խումբը, որի նախագահն է Արթուր Թովմասյանը եւ որի անդամ են նաեւ ես: Դեռեւս այս տարվա ապրիլին նախատեսված այցը Կիպրոս հետաձգվեց, եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լիբանանում նոր են ավարտվել խորհրդարանական ընտրությունները ու հայազգի խորհրդարանականների հետ հանդիպելու ցանկություն կար, որոշվեց այցի ընթացքում ընդգրկել նաեւ Լիբանանը: Այցերը Լիբանանի եւ Կիպրոսի ՀՀԴ Հայ դատի հանձնախմբերի հրավերով են կայացել: Այցը բավական հազեցած էր, ունեցանք մի քանի տասնյակ հանդիպումներ, ձեռք բերեցինք կարելու պայմանավորվածություններ:

կոմիտեի անդամների հետ, ներկայացրինք Արցախի այսօրվա իրավիճակը եւ պատասխանեցինք հուզող հարցերին: Հանդիպել ենք նաեւ Պուրճ Համուտի, Այնճարի քաղաքապետերի հետ:

Մայիսի 25-ի երեկոյան «Արցախն այսօր» խորագրով ձեռնարկ տեղի ունեցավ, որի ընթացքում ելույթ ունեցանք Արթուր Թովմասյանն ու ես: Ներկա էին ինչպես հայ համայնքի ներկայացուցիչներ, այնպես էլ ՀՀ դեսպանը, դեսպանատան աշխատակիցներ: Խորհրդարանում Լիբանան-Արցախ բարեկամական շրջանակ չկա, եւ ՀՀԴ խմբակցության ղեկավար Հակոբ Բազրատունու հետ քննարկվել է Արցախ-Լիբանան բարեկամական շրջանակ ստեղծելու հնարավորությունը: Եվ Արցախի խորհրդարանը

այլ ամբողջ աշխարհում է Արցախը հպարտության առարկա, Արցախի տառածքների կորուստը նաեւ նրանց է կոտրել: Հայկական Սփյուռքը ցանկանում է օր առաջ Արցախը ազատ տեսնել, որն այսօրվա ՀՀ իշխանությունների առկայության պարագայում անհնար է: Մեր հանդիպումների ժամանակ կարելու էր ենք Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամասնության վերականգնումը, որը ՀՀ ներկա իշխանությունների օրոք քայքայվել է: Իմ ելույթներում անդրադարձ եմ կատարել «Դիմադրության» շարժմանը եւ նաեւ նշել, որ Հայաստանում ընթացող շարժումը հանուն Արցախի եւ Հայաստանի փրկության է: Թե Կիպրոսում, թե Լիբանանում տեղյակ են Արցախի 5 խորհրդարանական կուսակցություններ:

խագահ Խարիս Ղեորկետաթիսի հետ: Հաջորդ հանդիպումը Նիկոսիայի քաղաքապետի՝ Կոստանտինոս Եորկաճիսի եւ ավագանու անդամներ Օլիա Մարուտիայի եւ Վալերիոս Տանիլիսիսի հետ էր: Հանդիպումներին մասնակցում էին նաեւ ՀՀԴ Կիպրոսի կոմիտեի ներկայացուցիչ Սիմոն Այնեճյանը եւ Հայ դատի հանձնախմբի ատենապետ Հակոբ Գազանճյանը:


Կիպրոսյան այցի շրջանակներում պատվիրակությունը հանդիպել է կիպրացի եվրախորհրդարանական Կոստաս Մավրիտիսի, Կիպրոսի խորհրդարանում ներկայացված «Կանաչների կուսակցություն» եւ «Ընկերվարական/սոցիալիստական/ ԵՏԵԼ կուսակցություն» խմբակցությունների պատգամավորների հետ: Ընկերվարական ԵՏԵԼ կուսակցության պատգամավոր Անդրեաս Ապոստոլուն վերջերս ընդգրկվել է «Կիպրոս- Արցախ» բարեկամական շրջանակի կազմում:

Հանդիպում է կայացել նաեւ Կիպրոսի Հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ Գերաշնորի Տեր Խորեն արքեպիսկոպոս Տողրամաճյանի հետ:

Հանդիպումների արդյունքում որոշ հասարակական-քաղաքական գործիչներ մաս են կազմել Արցախ-Կիպրոս բարեկամական շրջանակին: Այցը բավականին հազեցած էր, հիմնական շեշտը դրել ենք պրոարցախ շարժման ընդլայնման վրա՝ միջազգային տարբեր առյաններում Արցախի հարցի արժանապատիվ դեպքում հնարավոր աջակցություն ապահովելու համար: Համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ կարելու է Սփյուռքի հետ Արցախի կապի ամրապնդումը:

Այցի ընթացքում մեզ միացել է Եվրախորհրդարանի նախկին պատգամավոր Էլենի Թեոխարիուսը, որը մեր պատվիրակության 5-րդ անդամն էր փաստորեն: Այցի ամբողջ ընթացքում մեզ ուղեկցել են Լիբանանի ՀՀԴ Կենտրոնական կոմիտեի եւ Կիպրոսի կոմիտեի ներկայացուցիչները, ՀՀԴ Հայ դատի հանձնախմբերի նախագահները:

**Չորուցեց Տաթևիկ ԱՐԱՋԱՆՅԱՆԸ**



**- Ի՞նչ հանդիպումներ ունեցաք Լիբանանում:**

- Լիբանանում հանդիպեցինք հոգեւոր եւ ազգային իշխանության ներկայացուցիչների հետ, այցելեցինք վարժարաններ, հանդիպում ունեցանք ՀՀԴ պատգամավորական բլոկի ղեկավար Հակոբ Բազրատունու հետ, այցելեցինք Այնճար, որտեղ մասնակցեցինք ժողովրդական ձեռնարկի, հանդիպում ունեցանք ՀՀԴ Այնճարի Կարմիր Լեռան կոմիտեի, ՀՀԴ Լիբանանի Կենտրոնական

նի ղեկավարը, եւ Հակոբ Բազրատունին կարելու էր խոսել այդ ուղղությամբ համապատասխան քայլեր ձեռնարկելու:

**- Արցախը հպարտության, ոգեւորության առյուր է ամբողջ հայության համար: Հաշվի առնելով 44-օրյա պատերազմի արդյունքները՝ Արցախի առումով տրամադրությունների փոփոխություն նկատե՞լ եք:**

- Ոչ միայն Լիբանանում, Կիպրոսում,

որի հայտարարության մասին, սատար են եռամիասնության վերականգնմանը:

**- Ի՞նչ տպավորություն ստացաք Կիպրոս կատարած այցից, ի՞նչ գործնական արդյունքներ կարող եք նշել:**

- Կիպրոսում, ի տարբերություն Լիբանանի, հանդիպել ենք հիմնականում կիպրացի գործիչների հետ: Այցի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել իշխող ՏԻՄ կուսակցության նախագահ Ավերոֆ Նեոֆիդիսի եւ փոխնա-

### Դիմադրության շարժումը նոր մարտավարությամբ

2 ← Փողոցային պայքարը շարունակվում է փոքրինչ այլ ինտենսիվությամբ, բայց, դրան զուգահեռ, տեղի են ունենում Շարժման կառուցվածքային վերափոխման եւ ընդլայնման աշխատանքներ, ինչը հանգեցնելու է Շարժման առավել ընդլայնմանը:

Սակայն պետք է պատրաստ լինենք, որ առաջիկայում կարող են տեղի ունենալ շատ վճռորոշ զարգացումներ, եւ Շարժումը պետք է ունակ լինի օպերատիվ ու արդյունավետ արձագանքելու եւ հակազդելու, ունենա համապատասխան լծակներ ու հնարավորություններ: Ըստ այդ գարգացումների՝ մենք կարող ենք կրկին վերադառնալ 24 ժամվա ռեժիմի:

Միաժամանակ, մեր հիմնական օրակարգում պահելով Նիկոլի իրաժարականի հարցը, հարկ է նկատի ունենալ, որ օգոստոսի 2-ին լրանում է նրա պաշտոնավարման մեկ տարին, եւ նրան աթոռից հեռացնելու մեր գործիքակազմին ավելանում է եւս մեկը: Հետեւաբար, երկու ուղղություններով նախապատրաստական աշխատանքներ սկսելու հարց ունենք.

- պաշտոնակազմի հիմքերի ամբողջացում (իրավական-քաղաքական), դրա հանրային համաժողովրդական պահանջի դրսեւորում,

- ժողովրդի կողմից վարչապետի թեկնածուի առաջադրում՝ ի բավարարումն օրենքով սահմանված՝ անվստահություն հայտնելու նախապայմանի:

Այս մասին, սակայն, ավելի մանրամասն ու հանգամանակից խոսելու առիթ դեռ կունենանք:

Միտե՛լի՝ հայրենակիցներ, պատասխանատվության մասին: Շատ է խոսվում՝ ով կամ ովքեր են այս Շարժման պատասխանատվությունը կրում չհաջողելու դեպքում:

Նախ՝ չհաջողելու տարբերակ չունենք, եւ բոլոր նրանք, ովքեր արդեն նշանակել են մեղավոր եւ պա-

տասխանատու, նրանց խոր հիասթափություն է սպասվում պատռեք այդ տեքստերը եւ ուրիշ բան մտածեք:

Առաջին օրվանից ասել ենք, որ մենք այս Շարժման ե՛լ զինվորն ենք, ե՛լ առաջամարտիկը, ամբողջական պատասխանատվություն ենք կրում այս գործընթացների համար, այդ պատասխանատվությունն է մեզ բերել այս իրապարակ: Այդ պատասխանատվությունն ունի հասցե եւ անուն-ազգանուն՝ մենք, իսկ տվյալ դեպքում՝ ես ե՛լ քաղաքական, ե՛լ անձնական պատասխանատվություն ունեմ այս Շարժման ելքի համար:

Ես պատասխանատու եմ ամեն օր այս իրապարակ եկող 80-ամյա դոկտոր-պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի առջեւ՝ ամեն անգամ, երբ նայում եմ նրա աչքերին, տեսնում նրա պայքարը... Իհարկե, պատասխանատու եմ նրա առջեւ, նրա նման հարյուրավորների առջեւ: Դրանից մեծ պատասխանատվություն չկա:

Պատասխանատու եմ մեր նահատակ հերոսների ծնողների առջեւ: Պատասխանատու եմ երիտասարդների առջեւ, որոնք ընկերներն այսօր բանտերում են, բայց նրանք աննկուն պայքարում են: Սրանից ավելի մեծ պատասխանատվություն չկա: Բայց ամենակարեւորը՝ պատասխանատու եմ մեր զավակների ու սերունդների առջեւ: Ու թող սրանից հետո ոչ ոք պատասխանատվության դասեր չտա: Պատասխանատուն եմ, այս հարթակում կանգնած մարդիկ են: Մենք այդ պատասխանատվությունը ծայրից ծայր հասկանում ենք: Այդ պատասխանատվությունն է մեզ բերել իրապարակ:

Միտե՛լի՝ ժողովուրդ, մեր գաղափարակից տասնյակ ընկերներ այսօր բանտարկված են: Իհարկե, մեր փաստաբանները, պատգամավորները մշտական կապի մեջ են նրանց հետ: Հաճախ դուր ինքներդ էլ եք ստա-

նում բանտախցերից հղված նրանց կոչերը՝ շարունակել պայքարը, օր առաջ մաքրել երկիրը դավաճան իշխանություններից: Նրանց ոգին անկտորում է: Նրանք մեր պայքարի ուժն ու ոգին են: Եվ մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի օր առաջ բոլոր քաղաքականապաշտպանական ազատ արձակվեն, նորից գալ այս իրապարակ, միասին տունենք հաղթանակի բերկրանքը:

Այո, ճիշտ է, նրանք այսօր բանտարկված են, բայց ձեզ վստահեցնում եմ՝ նրանք շատ ավելի ազատ են, քան ԱԺ-ում ստատ Նիկոլի որոշ ուսապարկերը, կառավարական շենքերում դրված նախարարները եւ նույնիսկ իրենց վրա ճաղավանդակի դուռ փակող քննիչները, դատավորներն ու ոստիկանները:

Այս իրապարակից բոլորին կոչ եմ անում՝ բոլոր նրանց, ովքեր կիսում են մեր օրակարգը, բայց մեզ հետ չեն, միացե՛ք մեր պայքարին, կամ ստեղծե՛ք պայքարի ձեր օջախները: Մենք ձեզ միայն աջակցելու ենք: Մենք պատրաստ ենք օգնել ցանկացած նախաձեռնության, ցանկացած խմբի կամ ուժի, որը կիսում է ժողովրդի օրակարգը՝ հայ մնալու օրակարգը, Արցախը հայկական պահելու օրակարգը, Հայաստանն ինքնիշխան պահելու օրակարգը: Այո, մենք պատրաստ ենք աջակցել բոլոր նրանց, ովքեր կարող են պայքարել առանց Նիկոլի Հայաստան ունենալու համար, բայց ինչ-որ պատճառով այս հարթակում չեն:

Միտե՛լի՝ հայրենակիցներ, սա նաեւ լույսերի շարժում է: Վստահեցնում եմ՝ լույսը հաղթելու է չարիքին ու խավարին: Ժողովուրդը հաղթելու է, Նիկոլիզմը սրբվելու է մեր երկրից: Մենք վերագտնելու ենք մեր արժանապատվությունը: Հայաստանը, ինչպես այս իրապարակում է, դառնալու է ձեզ նման եղբայրների ու քույրերի երկիր: Հայաստանը դառնալու է ուժեղ, արդար երկիր»:

### Երիտասարդությունը՝ երկրի ապագան

«Ուզում եմ գուշակել մի երկրի ապագան, նայիր նրա երիտասարդությանը»: Լժոճեյան այս խոսքերը, հիրավի, իրական վկայությունն են 1980-ականների վերջերից սկիզբ առած մեր ազգային-ազատագրական պայքարի, որի ակունքներում երիտասարդներն էին, իսկ այդ պայքարի արդյունքը ծնունդն է հայկական գույզ պետությունների:

Այդ գոյապայքարում իր առանձնահատուկ դերն է ունեցել Արցախի պետական համալսարանը (մայր բուն այն ժամանակ կոչվում էր Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ):

1988 թվականի փետրվարի 12-ին Արցախի պետական համալսարանի հայ ուսանողներն ու դասախոսներն առաջին անգամ Ստեփանակերտում բողոքի ցույց կազմակերպեցին, որը հետագայում դարձավ համաժողովրդական ազատագրական պայքարի Արցախյան փուլի մեկնակետը:

Պայքարի հետագա՝ ռազմական առճակատման փուլն ստիպեց, որպեսզի այդ նույն երիտասարդները, թողնելով իրենց ձեռքի գրիչը, գեթ վերցնեն՝ հանուն սեփական հողի ու ժողովրդի հարատևման: Հազարավոր երիտասարդների արյան գնով, սակայն, բաղձալի հաղթանակն ի վերջո իրողություն դարձավ:

Պետո, Կարոտ, Բեկոր, Դուշման Վարդան... մեզ հաղթանակ պարգևած այս տղաները, սակայն, վերջին զոհերը չէին: 30-ամյա մեր ոչ խաղաղություն, ոչ պատերազմ ժամանակահատվածում շատերը հայոց սահմանների պաշտպանության ժամանակ ընկան ոսոխի նեղ փափմուշտներից: Հետո եկան ապրիլյան, հետո՝ քառասունչորսորյա արհավիրքները:

Ու կրկին մեր երիտասարդներն ու ուսանողները, թողնելով իրենց ուսանողական ու աշակերտական նստարանները, ելան մարտի: Ելան ու հավերժի ճամփորդները շարքերը կրկնապատկեցին: Աղամ, Ռոբերտ, Ալբերտ, Արթուր, Ալեն. հազարավոր երիտասարդներ իրենց անունը փառքով պսակեցին Բեկորի, Մոնթեի, Դուշմանի եւ մյուսների անունների կողքին:

Դաժան ու անողորմ եր պատերազմը: Մարտադաշտից շատ շատերը չվերադարձան իրենց նստարաններին, իսկ նրանք, ովքեր վերադարձան, հայտնվեցին պայքարի մի նոր հանգրվանում, հանգրվան, որտեղ պայքարի ուղղությունները շատ-շատ են, անելիքները՝ բազմապիսի: Նախա եւ հետպատերազմյան իրավիճակներում ուսանողական կյանքի տարբերությունների եւ դժվարությունների մասին «Ապառաժ»-ը գրուցել է Արցախի պետական համալսարանի ուսխորհրդի նախագահ Արա Մարգարյանի, Մեսրոպ Մաշտոց համալսարանի ուսխորհրդի նախագահ Հրաչ Մայիլյանի եւ Գրիգոր Նարեկացի համալսարանի ուսխորհրդի փոխնախագահ Նարինե Առուշանյանի հետ:

«Ապառաժ»-ը իր գրուցակիցներին առաջադրել է նույն հարցադրումները, որոնք ներկայացնում են ստորև.

**- Ինչո՞վ են այսօր հետաքրքրված արցախցի ուսանողները:**

**Ն. Առուշանյան.** Այսօր, ցավոք, փոխվել են ոչ միայն ուսանողների, այլ բոլորի հետաքրքրություններն ու նպատակները: Այսօր բոլորիս հետաքրքրությունները կապված են Արցախի խաղաղ ու անվտանգ ապագայի հետ:

**Ա. Մարգարյան.** Պատերազմից հետո ուսանողներն ավելի շատ են իրենց պարտավորված գգում՝ հայրենիքին հնարավորին չափ օգտակար դառնալու համար:

Այսօր արցախցի ուսանողները ավելի շատ են մոտիվացված, հատկապես՝

հետպատերազմյան շրջանում, քանի որ ամեն կերպ փորձում են հմտանալ, որպեսզի կարողանան ի շահ մեր հայրենիքի գործունեություն ծավալել եւ դրան, իհարկե, նպաստում է բուհը՝ փորձելով օգնել ու հեշտացնել այդ գործընթացը:

**Հ. Մայիլյան.** Ինչպես յուրաքանչյուր արցախցի, ուսանողը էս ունի մեկ նպատակ՝ ծառայել հայրենիքին: Նա ամեն կերպ հետաքրքրված է իր կարողու-



թյամբ ու գիտելիքներով երկրին օգնելու, այս վիճակից դուրս բերելու խնդրով: Դա կարող է լինել իր գիտելիքներով, հասարակական ակտիվությամբ, իր ձայնը լսելի դարձնելով, Արցախի դրոշմը աշխարհի տարբեր տեղեր ծածկելով:

**- Ո՞րն է պատերազմից հետո ուսանողների դերակատարությունը հասարակության մեջ:**

**Ա. Մարգարյան.** Պետք է կրթվել ու շարժվել դեպի առաջ, ցանկացած գնով նպաստել մեր երկրի, հայրենիքի հզորացմանն ու զարգացմանը, բոլոր ուղղություններով ակտիվորեն աշխատել՝ ջանք ու եռանդ չխնայել, որպեսզի ապագայում լինենք մեր հայրենիքի արժանի զավակները:

**Հ. Մայիլյան.** Յուրաքանչյուր մարդու դերն իր հայրենիքում արժանի քաղաքացի լինելն է: Ուսանողի դերակատարության բարդությունը կայանում է նրանում, որ ուսանողն է երկրի վաղվա ապագան: Մեր սովորած, մեր կերտած սերունդն է վաղը պահելու Արցախը: Սակայն, մինչ այդ կա նաեւ ներկա, որն այդքան էլ լավ վիճակում չէ: Ուսանողը պիտի այսօր դեռ փրկի ներկան. այն օրհասական է, այն անհստակ է ու անկանխատեսելի: Պիտի ամեն ինչ անենք ղեկը ճիշտ կողմ թեքելու ու փոթորկից խուսափելու համար:

**Նարինե Առուշանյան.** Կարծում եմ՝ պատերազմից հետո բոլորիս դերն Արցախում ապրելն ու Արցախն ապրեցնելն է:

**- Հիրավի, տեղին է ասված՝ Արցախում պետք է ապրել ու ապրեցնել Արցախը:**

Բնական է, որ պատերազմն իր անջնջելի հետքն է թողել ուսանողների, նրանց ակտիվության եւ ուսման հանդեպ տրամադրվածության վրա:

**Հ. Մայիլյան.** Պատերազմի օրերին ու դրանից հետո երկար ժամանակ ուսանողները հասկանալի պատճառներով չէին կարողանում կենտրոնանալ կրթության վրա, սակայն կարելու է գիտակցել, որ միայն կրթված լինելով կարող ենք կերտել մեր երազած երկիրը: Եթե ամեն մեկս մեր գործում լինեինք լավագույնը, ապա այսօր այս վիճակը չէր լինի: Այո՛, մեր այս վիճակի գլխավոր պատճառը կրթության թերի լինելն է: Մենք պետք է լինենք կրթված քաղաքացի, կրթված ծնող, կրթված գրուցակից...

Խոսքը միայն մասնագիտության մասին չէ, մեր առջեւ դրված բոլոր պարտականությունները պետք է կատարենք առավելագույնս: Պիտի չանենք այն, ինչ մեր գիտելիքներին համապատասխան չէ. բժիշկը պետք է իր գործով զբաղվի, դա-

սախոսը՝ իր, կոշկակարը՝ իր: Չկան կարելու ու անկարելու գործեր: Ամեն մեկս պետք է մեր տեղում լինենք, որպեսզի չվնասենք, որպեսզի չվնասվենք ու կարողանաք հայրենիք կերտել:

**Նարինե Առուշանյան.** Պատերազմը փոխել է բոլորին եւ ամեն ինչ: Իհարկե, փոխվել է ուսանողների ակտիվությունը, ցավի ու կորստի հետ անհամատեղելի է ակտիվությունը, բայց այսօր փորձում ենք նորից առաջ նայել այն հստակ գիտակցումով, որ կրթվելով ու լավ մասնագետներ դառնալով կարող ենք օգնել մեր երկրին:

**Արա Մարգարյան.** Թեեւ առկա դժվարություններին ու մարտահրավերներին, ուսանողներն ավելի մոտիվացված են, քանի որ ստեղծված իրադրությունը պարտադրում է նրանց կրթվել, որպեսզի ներքին ու արտաքին մարտահրավերներին կարողանան դիմակայել: Պետության հզորացման ուղղություններից մեկը հենց կրթությունն է՝ իր մրցունակ ու գիտելիքներով գինված քաղաքացիներով:

**- Չաղտնիք չէ, որ ուսանողները համարվում են հասարակության ամենակրթված կորիզը: Արցախյան շարժումը սկսվեց համալսարաններից, սակայն այսօր կարծես թե ուսանողներն անտարբեր են քաղաքական զարգացումներին, կամ էլ ուղղորդվում են համալսարանների կողմից: Ինչպե՞ս եք մեկնաբանում այն հանգամանքը, որ ուսանողներն ինքնուրույն չեն մասնակցում երկրի ճակատագրին վերաբերող գործընթացներին, մինչեւ որ նրանք թույլտվություն չեն տալիս համալսարանները, չեն ցուցաբերում ակտիվություն տեղի ունեցող զարգացումներին համապատասխան:**

**Ն. Առուշանյան.** Արցախյան շարժման ժամանակ համախմբվածություն եւ հստակ տեսլական կար: Այսօր համատարած անորոշություն է տիրում, որը կարծես շեղում է բոլորին եւ դեպի անտարբերության տանում:

**Հ. Մայիլյան.** Չեմ կարծում, թե չեն մասնակցում կամ սպասում եմ համալսարանից թույլտվության: Գիտե՞ք, որ արգելված պտուղը միշտ էլ քաղցր է, եւ եթե համալսարանի թույլտվությամբ լինեք, ապա ավելի շատ մարդ կընդգրկվեք այս դեպքում: Իմ կարծիքով, ընդհանուր հուսահատությունն է շատացել: Մարդիկ շատ բան են կորցրել, ու, ցավոք, այդ ամենի հետ միասին նաեւ կորցրել են իրենց հավատը: Կան մարդիկ, ովքեր ծանր իրավիճակներից հետո հավաքվում ու ավելի մեծ ու ուժեղ կամքով առաջ են շարժվում: Մարդիկ էլ կան, ովքեր մնում են հուսահատության մեջ ու դեռ կորցրածի մասին են մտածում: Դժվար է, ծանր է բոլորիս համար էլ, բայց պիտի կարողանանք ընդունել իրականությունը ու գոնե ունենալ պահել: Պիտի հենց առաջին տիպի մարդկանց թիվը շատանա ոչ միայն ուսանողների, այլև ընդհանուր մարդկանց շրջանում, որպեսզի բարձրանա նրա ու անկուտումը այնքա առաջ շարժվելու ու հայ մնալու համար:

**Ա. Մարգարյան.** Այս հարցում ուսանողները չպետք է սպասեն համալսարանին: Ուսանողը՝ բացի իր կրթությունից, ունի նաեւ անձնական կյանք եւ ինքն է որոշում, թե ինչպես պետք է շարժվել: Յուրաքանչյուր ոք պետք է գործի սեփական խելքով: Այսքանիս հետ պետք է նշեն, որ առկա փոլում տարբեր գործընթացներ են տեղի ունենում, որոնք կարող են իրականում չլինել այն, ինչ երեւում են առաջին հայացքից, եւ ուսանողները, ինչպես նաեւ ցանկացած քաղաքացի, պետք է ամեն քայլ անելուց վերլուծի, հետո գործի:

**- Արդյո՞ք ուսանողներն ակտիվ են եւ մասնակցում են կազմակերպվող հասարակական միջոցառումներին:**

**Հ. Մայիլյան.** Մեր ուսանողների ակտիվության ապացույցները բազմաթիվ հավաստագրերն են՝ կնքված ՀԿ-ների, ՀՀ եւ ԱՀ բուհերի ՈՒՄ-ների հետ:

Մեր համալսարանը մասնակցում է հասարակական կազմակերպությունների եւ մնացած բուհերի ՈւՄ-ների կողմից կազմակերպված միջոցառումներին: Շատ ակտիվ մասնակցել եւ մեր ուժերի չափով աջակցել ենք տարբեր ծրագրերի իրականացմանը:

**Ա. Մարգարյան.** Վերջին շրջանում ինչոր չափով ակտիվությունը արտահամալսարանական միջոցառումներին նվազել է, որն ունի իր պատճառները: Դա կապված է քննաշրջանի, համալսարանում կազմակերպվող միջոցառումների ու համալսարանական այլ խնդիրների հետ: Սակայն պետք է նշեմ, որ այդ ուղղությամբ նույնպես աշխատել ու աշխատում ենք, քանի որ տարեսկզբին մեր ռազմավարության մեջ դա էս կար:

**Ն. Առուշանյան.** Մենք համագործակցում ենք հասարակական կազմակերպությունների հետ եւ ակտիվորեն մասնակցում ենք հասարակական ծրագրերին ու համագաղային նշանակության բոլոր միջոցառումներին:

**- Որո՞նք են ուսանողների հիմնական խնդիրներն այսօր համալսարանում:**

**Ա. Մարգարյան.** Ուսանողների հիմնական խնդիրները կապված են կրթական ոլորտի հետ, եւ իմ կարծիքով՝ այդ ուղղությամբ պետք է լինեն արմատական փոփոխություններ: Բոլորիս համակարգը ներկա զարգացումներին համընթաց չի քայլում: Խնդիր է նաեւ ուսանողների նախաձեռնողականությունը, որի ուղղությամբ արդեն իսկ սկսել ենք աշխատել՝ համագործակցելով համալսարանի համապատասխան ստորաբաժանումների հետ:

**Ն. Առուշանյան.** Թեեւ մենք ունենք հետաքրքիր ու հագեցած ուսանողական առօրյա, սակայն համալսարանում ունեցած խնդիրները կապված են Արցախում ստեղծված հետպատերազմյան իրավիճակով: Պատերազմից հետո մենք ունենք մասնագետների պակաս, որը փորձում ենք լրացնել Հայաստանի ու



արտերկրի մասնագետների հետ առցանց հանդիպումներով ու դասախոսություններով:

**Հ. Մայիլյան.** Այսօր համալսարանները նորագույն տեխնոլոգիաներով կահավորման խնդիր ունեն: Ինչքան էլ դասախոսը դասապրոցեսը փորձի ավելի պարզ ու մատչելի դարձնել, ուսանող տարբեր աղբյուրներից օգտվի նյութը յուրացնելու համար, մեկ համակարգչի ու պրոյեկտորի ամկայությունն ավելի մատչելի ու ընկալելի կդարձնի դասավանդումը: Միգուցե այդ կրճատված ժամանակն էլ ուսանողը կծախսի առարկայի մեջ ավելի խորանալու վրա: Այս խնդիրը վերաբերում է ոչ միայն համալսարաններին, այլ նաեւ դպրոցներին ու կրթական այլ հաստատություններին:

### Երիտասարդությունը՝ երկրի ապագան

**4** ← - *Ինչպես գիտեք, ուսիրորդների առաքելությունը ուսանողների շահերի է իրավունքների պաշտպանությունն է: Արդյո՞ք ուսիրորդներն այսօր ուսանողի կողքին են ուսանող-դասախոս հարաբերություններում:*

**Ն. Առուշանյան.** Չև համալսարանում ուսանող-դասախոս հարաբերությունները բավականին անմիջական են:

Ուսանողական խորհուրդն, իհարկե, միշտ ուսանողների կողքին է, հատկապես՝ առաջին կուրսեցիների, նրանց օգնում է ինտեգրվել ուսանողական առօրյային, բայց դասախոսները եւս հետաքրքրված են ուսանողների խնդիրներով ու մտահոգություններով:

**Յ. Սայիյան.** Մենք մեր ուսանողների էլ դասախոսների հետ ունենք շատ ջերմ հարաբերություններ:

Մեր համալսարանը հենց դրանով էլ առանձնանում է, որ ուսանող-դասախոս հարաբերությունները դասապրոցեսից հետո պաշտոնական չեն, այլ՝ ընկերական: Կարծում եմ՝ սա ուսանողների համար լավ սովորելու եւս մեկ շարժառիթ է:

**Ա. Սարգսյան.** Ուսանողի կողքին եք ցանկացած հարցում, որոնք վերաբերում են նրանց, իհարկե՝ օրինականության շրջանակներում:

- *Ինչո՞վ են տարբերվում ԱրՊ, ՄՄ և ՉՆ համալսարանների ուսանողներն իրարից:*

**Յ. Սայիյան.** Որտեղ էլ որ լինի մարդը, շատ կարեւոր է բացահայտել նրա պոտենցիալը, որպեսզի կարողանաս դա ճիշտ օգտագործել: Դա վերաբերում է թե՛ աշխատանքի վայրում, թե՛ դպրոցում, թե՛ որտեղ միջոցառման ժամանակ, ամենուր: Մենք փորձում ենք հենց դա բացահայտել:

Մարդիկ կան, ովքեր դպրոցում բեմ չեն բարձրացել, բայց մեզ մոտ ակտիվ ուսանողների շարքում են: Դասախոսները, ուսանողները միշտ ու ամեն տեղ նույնն են, կարեւորը նրանց ճիշտ համագործակցությունն է ու երկուսի ունակությունների ճիշտ օգտագործումը:

**Ա. Սարգսյան.** Նախեւառաջ՝ տարբերվում են ակտիվությամբ, իսկ ամենակարեւորը՝ գիտական աշխատանքների ու հետազոտությունների ուղղությամբ, որն այս տարի զգալիորեն ավելի էր

ընդգծված մեր ուսանողների մոտ: Համալսարանի ուսանողները մասնակցել են ՀՀ եւ արտասահմանյան այլ բուհերի գիտաժողովների ու գիտական կոնֆե-



րանսների, որը ուսանողական գիտական ընկերության հետ համատեղ աշխատանքների արգասիքն է:

**Ն. Առուշանյան.** Մենք ունենք ամենաակտիվ, ամենախելացի ու ամենաակտիվ ուսանողները:

- *Որպես վերջաբան, ո՞րն է համալսարանների ասելիքն այն դիմորդներին, ովքեր սեպտեմբերից առաջին անգամ են հաճախելու իրենց համալսարաններ:*

**Յ. Սայիյան.** Բարի գալուստ մեր ընտանիք: Խոստանում ենք տալ որակյալ բարձրագույն կրթություն, ապահովել ուսանողների հիշարժան ուսանողական կյանքը: Փակագծեր չեն բացում՝ այն թողնելով ուսանողների բացահայտմանը:

**Ն. Առուշանյան.** Պետք է դիմորդների մոտ ամրապնդենք այն համոզմունքը, որ բանիմաց, նպատակասլաց ու մասնագիտական կարողություններով օժտված երիտասարդներն են ուժեղ ու զարգացած պետության հիմքը:

**Ա. Սարգսյան.** Ինչպես ամեն տարի, այս տարի սեպտեմբերից են ԱրՊ-ն կկազմակերպի համապատասխան միջոցառումներ, որպեսզի լուծի հետեւյալ խնդիրները՝ իրագրելի ուսանողներին նրանց իրավունքների ու պարտականությունների մասին, շատ կարճ ժամանակահատվածում օգնի, որպեսզի ինտեգրվեն համալսարանական ակտիվ կյանքին, ինչպես նաեւ ընթացիկ այլ հարցեր լուծելուն:

Վահագն ԿԱՉԱՏՐՅԱԼ

### Ընթացքի մեջ են միասնական քննությունները

Հունիսի 7-ին մեկնարկել է միասնական քննությունների հիմնական փուլը: Այս տարի բուհերի ընդունելության կարգում կատարվել են մի շարք փոփոխություններ: Այդ փոփոխությունների էլ քննաշրջանի կազմակերպման մասին «Ապառաժ»-ը գրուցել է ԱՀ Գնահատման եւ թեստավորման կենտրոնի տնօրեն Յուրի Զարամյանի հետ:

«ԱՀ պետական եւ ոչ պետական, ինչպես նաեւ ՀՀ պետական բուհերի ընդունելության կարգը» հաստատվել է ԱՀ կառավարության 2022թ. մարտի 21-ի Ն-287 որոշմամբ:

Խոսելով կատարված փոփոխությունների մասին, Յ. Զարամյանը նշեց, որ թեթևախորհրդ տարի քննությունները եղել են կենտրոնացված, ապա այս տարի քննությունները կենտրոնացված չեն:

«Կենտրոնացված քննություններն իրենցից ենթադրում էին Հայոց եւ օտար լեզուների բանավոր քննություններ, իսկ այս տարի միայն միասնական քննություններ են՝ թեստային տարբերակով, եւ ներբուհական քննություններ, որոնք բուհերն են անցկացնում»:

Երկրորդ փոփոխությունը հետեւյալն է. նախկինում եղել են մրցութային քննություններ, որոնք նշված էին 2 աստղակիշով, եւ տվյալ մրցույթի համար դիմորդները կարող էին ներկայացնել տարբեր կամ պետական ավարտական քննությունների արդյունքները: Հիմա ընդունելության համար դիմորդը պարտադիր պետք է հանձնի միասնական, ներբուհական քննություններ. «ատեստատից ոչ մի գնահատական չի տեղափոխվում», - ասել է Յ. Զարամյանը:

ԳԹԿ տնօրենն, անդրադառնալով մրցութային կարգին, նշել է.

«Սկզբից կազմվում են միայն 2 միասնական քննություններից՝ դրական ստացած դիմորդների ցուցակը, որից հետո թափուր, վճարովի տեղերի համար՝ մյուս դիմորդներինը, որոնք ունեն տվյալ առարկայից 6-ից մինչեւ 7.25 միավոր: Բացի դրանից, մենք արդեն զորացրված զինծառայողներին արտոնություն ենք տրամադրում: Նրանք առանց մրցույթի են ընդունվում վճարովի համակարգում, այսինքն՝ եթե նշում են վճարովի համակարգը եւ ստանում դրական միավորներ, միանգամից ընդունվում են, առանց մրցույթի, սակայն իրենց միջեւ առավելությունը տրվում է այն զինծառայողներին, ովքեր մարտական հերթապահություն են իրականացրել»:

Յ. Զարամյանը նշեց, որ քննություններն անցկացվում են 2 եղանակով՝ միասնական եւ ներբուհական: Միասնական քննություններն անց է կացնում ԳԹԿ-ն, իսկ ներբուհական քննությունները՝ տվյալ բուհը:

«Քննությունների անցկացման կարգում որտեղ փոփոխություն չկա:

Դրական միավորի շեմը 7.25-ն է, սակայն տարբեր մասնագիտությունների գծով ընդունելության նվազագույն շեմը տարբեր է: Օրինակ, իրավագիտության համար նվազագույն շեմը 2 քննությունների գումարային արդյունքն է՝ 30.25: Որոշ առարկաների համար կա նաեւ պայմանական՝ 6-7.25 անցողիկ արդյունքներ: Այդ ցանկը հաստատված է կառավարության համապատասխան որոշմամբ:

Դիմորդն իրավունք ունի հավակնել միայն մեկ մասնագիտության կրթական ծրագրի: Դա նշանակում է, որ դիմորդը կարող է հայտ ներկայացնել ԱՀ-ում 3 բուհի մեկ մասնագիտական կրթական ծրագրի համար: Օրինակ, եթե դիմորդը ցանկանում է սովորել իրավագիտության բաժնում, նա կարող է առաջին հայտով նշել ԱրՊ-ն, հետո ԳՀ-ն, այնուհետեւ ՄՄ-ն, կամ՝ ինչպես որ կկամենա: Եթե դիմորդը ցանկանում է հետագայում լինել իրավագետ, մեզ համար չպետք է տարբերություն լինի, թե որ բուհն է ավարտում: Եթե տվյալ համալսարանները հավասարազորված են, ապա նույն նմուշի դիմում են ստանում: Ի տարբերություն ՀՀ-ի, արդեն 2 տարի է, ինչ այս փոփոխությունը մենք կիրառում ենք:

Նախկինում կարող էին դիմել մինչեւ 7 վճարովի եւ 2 անվճար մասնագիտությունների համար, սակայն այդ մոտեցումը ես սխալ եմ համարում: Սկզբից նշում են



իրավագիտություն, վերջում՝ տարրական մանկավարժություն: Սա ի՞նչ է նշանակում. որ տարրական մանկավարժությունը նշել է ձեւական, այսինքն՝ ամեն դեպքում համալսարան ընդունվելու համար: Հայոց պատմությունից եւ օտար լեզվից ցածր միավոր է ստանում, հայոց լեզվից՝ բարձր, եւ ինքնաբերաբար ընդունվում տարրական մանկավարժություն բաժնից՝ դուրս թողնելով որոշ դիմորդների, ովքեր ցանկություն ունեին սովորել այդ բաժնում: Թեեւ իրավագիտության համար դիմորդն ավելի բարձր է ստացել հայոց լեզուն, քան դիմորդը՝ տարրական մանկավարժության համար, եւ դուրս թողնելով նրան՝ զբաղեցրել այդ տեղը, ժամանակի ընթացքում հասկանում է, որ դա իրենը չէ եւ սկսում է մտածել տեղափոխվելու մասին: Մինչդեռ, այդ ցածր միավորով դիմորդը, որը նպատակ ուներ մանկավարժություն մասնագիտության մեջ խորանալու, հնարավոր է հետագայում շատ ավելի լավ արդյունքներ գրանցեր, քան այն դիմորդը, որ դիմել էր իրավագիտության համար, սակայն հայտնվել է տարրական մանկավարժության բաժնում», - նշել է Յ. Զարամյանը:

Միասնական քննությունների առաջին փուլն այս տա-

րի մեկնարկել է հունիսի 7-ին եւ ավարտվելու է հունիսի 24-ին: Հունիսի 7-ին անց է կացվել կենսաբանություն եւ աշխարհագրություն, հունիսի 10-ին՝ օտար լեզուներ՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, հունիսի 14-ին՝ հայոց լեզու եւ գրականություն, հունիս 17-ին՝ մաթեմատիկա, հունիսի 21-ին կանցկացվի ֆիզիկա եւ հայոց պատմություն, հունիսի 24-ին՝ քիմիա եւ ռուսաց լեզու առարկաների միասնական քննությունները:

Ինչպես ԳԹԿ տնօրենն է տեղեկացրել, քննության պատասխանները քննության օրը տեղադրվում են ԳԹԿ կայքում, իսկ արդյունքները հրապարակվում են քննության օրվան հաջորդող 5-րդ օրը:

Բողոքարկումը լինելու է հունիսի 24- 30-ը, այնուհետեւ՝ հունիսի 1-9-ը լինելու է միասնական քննությունների 2-րդ փուլը:

Այս տարի դիմորդների թիվը 710 է, ովքեր ԱՀ, ՀՀ եւ ՌԴ բուհերի ընդունվողներն են: «Դիմորդների թիվն աճել է, ինչը պայմանավորված է շրջանավարտների քանակի աճով: Առկա համակարգի համար հիմնական տոկոսային հարաբերակցությունը պահպանվում է 60-70 տոկոս, մնացածները մտածում են կամ հեռակային մասին, կամ ուրիշ տեղ են դիմում», - ասել է Յ. Զարամյանը:

Նրա խոսքով՝ բոլոր մասնագիտությունների համար դիմում-հայտերը կան, սակայն դիմորդները շարունակում են նախապատվությունը տալ իրավագիտության, ֆինանսներ, կառավարում մասնագիտություններին:

«Այս տարի բավականին շատ են հայտերը նաեւ հոգեբանություն մասնագիտության համար: Ինչպես միշտ, մեծ է քանակը նաեւ հայոց լեզու, անգլերեն առարկաներից: ՀՀ բուհերում սովորելու համար հիմնականում դիմում են տեղեկատվական անվտանգության եւ բժշկական մասնագիտությունների գծով: Ցավոք սրտի, նպատակային տեղեր ունենք արարային մասնագիտությունների գծով, սակայն դիմորդներ չունենք»:

Քիմիա, ֆիզիկա առարկաներից, ինչպես միշտ, դիմորդների քանակը քիչ է: Այս տարի, ցավոք սրտի, նաեւ մաթեմատիկա առարկայի համար, համեմատած նախորդ տարիներին, քիչ են դիմորդները», - ընգծել է Յ. Զարամյանը:

Կենսաբանություն առարկայից քննությանը մասնակցության հայտ էր ներկայացրել 103, աշխարհագրությունից՝ 8 դիմորդ:

«Կենսաբանություն առարկայից, նախորդ տարվա համեմատ, այս տարի 0-7.25 միավոր ստացած դիմորդների տոկոսային հարաբերությունը շատ քիչ է փոփոխվել, բայց 18-20 միավոր ստացողներինը նվազել է: Նախկինում եղել է 20 միավոր ստացող 2 դիմորդ, այս տարի ամենաբարձր միավորը 19.5 էր: Դրական միավոր ստացողների մոտ եւս փոփոխություն չկա: Սա հետեւանքն է մեզ հետ կատարված իրադարձությունների: Կորոնավիրուսի եւ պատերազմի հետեւանքը մենք զգալու ենք այս տարի եւ առաջիկա մի քանի տարիներին, որովհետեւ բացակայելու են բազային գիտելիքները: Մեզ համար այս արդյունքներն սպասելի էին, սակայն եթե աշխատենք, կարող ենք լավ արդյունքներ ապահովել», - ասել է Յ. Զարամյանը:

Վ. ԿԱՉԱՏՐՅԱԼ

### ՀՀ կառույցները՝ Արցախի համար

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական կոմիտեն պատերազմից հետո Արցախի բնակիչների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավման, պարենային անվտանգության ապահովման համար մի շարք ծրագրեր է մշակել: Այս մասին «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է ՀՀ Արցախի ԿԿ անդամ Ժիրայր Շահիջանյանը: Նրա խոսքով՝ տվյալ ծրագրերը ներկայացվել են ՀՀ աշխարհասփյուռ կառույցներին: «Մեր



առաջարկներին արձագանքել են ՀՀ ԱՄՆ Արևելյան շրջանի «Արցախ ֆոնդ» բարեգործական հիմնադրամը, Հայ օգնության միությունը, կուսակցական տարբեր քույր կառույցներ, հանձնախմբեր, երիտասարդական միություններ: Նրանց միջոցներով ֆինանսական օժանդակություններ են տրամադրվել պատերազմի զոհերի ընտանիքներին, վիրավորում ստացածներին ու տեղահանվածներին: Փրանսիայի «Նոր սերունդ» երիտասարդական միությունն էլ գազի տարաներ է հասցրել Արցախի մի շարք բնակավայրերի բնակիչներին»,- ասել է Ժիրայր Շահիջանյանը:

Նա նաև ավելացրել է, որ առաջիկայում ՀՀ-ի նախաձեռնությամբ էլ ԱՀ սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարության հետ համագործակցությամբ մի լայնածավալ ծրագիր է իրագործվելու, որի նպատակը արեւային ջրատաքացուցիչներով հնարա-

վորինս շատ ընտանիքների ապահովելն է: ՀՀ ԱՄՆ Արևելյան շրջանի «Արցախ ֆոնդ» բարեգործական հիմնադրամի Արցախի մասնաճյուղի պատասխանատու Տրդատ Մարտիրոսյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում տեղեկացրել է, որ արդեն ավարտվել է Արցախի մի շարք գյուղերի ընտանիքներին հավի ճուղի հատկացնելու ծրագիրը: Մարտակերտի շրջանի Հարությունազուր, Կնկավան, Մարտունու շրջանի Ննգի, Ավդուռ, Մյուրիշեն եւ Ասկերանի շրջանի Նախիջեանիկ, Վարդաձոր, Սառնաղբյուր գյուղերի՝ ընդհանուր առմամբ 409 ընտանիքներից յուրաքանչյուրն ստացել է 25 հատ մեկ ամսական հավի ճուղի (10500 հատ հավի ճուղի): Միայն Ասկերանի շրջանի Վարդաձոր համայնքում ընտանիքներն ստացել են 21-ական հավի ճուղի, քանի որ համայնքի ղեկավարի կողմից նախապես ներկայացված ցանկում ընտանիքների թիվը քիչ էր, եւ համայնքի հատկացված հավի ճուղի հավասարաչափ բաժանվել են բոլոր ընտանիքների միջև:

Ըստ Տրդատ Մարտիրոսյանի՝ հիմնադրամի այս ծրագրով գյուղացիները եկամտի հավելյալ աղբյուր կունենան, եւ հետագայում հավաքուծությամբ զբաղվելու հնարավորություն կստանան նաեւ այն ընտանիքները, որոնք դեռեւս չեն զբաղվում:

Նա, խոսելով ծրագրի մասին, նշում է, որ այն հաջողված էր եւ գյուղացիների համար լրացուցիչ օժանդակություն: Բնակիչների առաջարկով՝ նման ծրագրերի դեպքում հետագայում հաշվի է առնվելու տվյալ ընտանիքի անդամների թիվը:

Ասկերանի շրջանի Սառնաղբյուր համայնքի ղեկավար Գարիկ Ալեքսանյանը նշում է, որ տարիներ ի վեր հայր միշտ եղել է պատերազմների, դժվարությունների մեջ, բայց հավատը, հույսը չի կորցրել: «Բարեգործություններ կատարելով, ներդրումներ անելով Արցախի ապագայի հույսերը նորից ծիլեր են գցելու ու հույսով, հավատով հզորանալու ենք»,- համոզմունք է հայտնում թշնամուց մի քանի հարյուր մետր հեռավորության վրա ապրող ու արարող համայնքի ղեկավարը:

«Արցախ ֆոնդի» Արցախի մասնաճյուղի պատասխանատու Տրդատ Մարտիրոսյանը ներկայացրել է Արցախում իրագործվող մեկ այլ ծրագիր էս:

ՀՀ ԱՄՆ Արևելյան շրջանի «Արցախ ֆոնդ»-ի մի-

ջոցներով վերանորոգվում է ԱՀ Ասկերանի շրջանի Նորագյուղի հանդիսությունների սրահը: «ՀՀ ԱՄՆ Արևելյան շրջանի «Արցախ ֆոնդ»-ի հանձնախմբի մի խումբ անդամներ 2020թ. դեկտեմբերին այցելել են Արցախ, հանդիպել պատերազմի ընթացքում նահատակված երկու տասնյակ զինծառայողների եւ պահեստագործայինների հարազատների հետ:

Այցի ընթացքում հյուրերը եղել են Արցախի մի շարք համայնքներում, այդ թվում՝ Ասկերանի շրջանի Նորագյուղ համայնքում: Նորագյուղը ԱՀ ամենամեծ համայնքներից մեկն է, եւ գյուղացիների հետ զրույցում տեղեկանալով, որ հանդիսությունների սրահը վերանորոգման կարիք ունի, ընդառաջել են նրանց խնդրանքին եւ ձեռնամուխ եղել սրահի վերանորոգման աշխատանքներին»,- նշել է Տ. Մարտիրոսյանը:

Նրա խոսքով՝ շինարարական աշխատանքներն սկսվել են 2022թ. ապրիլին, Ապստոսում էլ շահագործման հանձնել օգոստոսին: Տ. Մարտիրոսյանը կարեւորել է Նորագյուղի նման խոշոր համայնքում



հանդիսությունների շենքի կառուցումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նորագյուղը աճող համայնք է. եւ գյուղում բարեկարգ սրահի առկայությունը կոյուրացնի տարբեր միջոցառումների անցկացումը:

S. ԱՐԱՋԱՆՅԱՆ

### Բերքահավաքի առաջին արդյունքները գոհացուցիչ են

Արցախի Հանրապետությունում տարվա այս օրերին արդեն իսկ սկսվում են հացահատիկային մշակաբույսերի հավաքը: Գյուղատնտեսության ոլորտում կատարված աշխատանքների եւ ունեցած արդյունքների մասին «Ապառաժ»-ը զրույցել է ԱՀ գյուղատնտեսության նախարար Նորայր Մուսայելյանի հետ:

**- Պարոն Մուսայելյան, արդեն սկսվել են բերքահավաքի առաջին աշխատանքները: Այս պահին ինչպե՞ս է ընթանում բերքահավաքը: Արդյո՞ք գոհացնող են առաջին արդյունքները:**

- Այս պահին լայնածավալ բերքահավաքի աշխատանքները դեռեւս չեն մեկնարկել: Օրերս Մարտունու շրջանում շուրջ 30.0 հեկտարի վրա փորձնական իրականացվել են գարնան բերքահավաքի աշխատանքներ:

Հաշվի առնելով տվյալ տարածքի բնակչության պայմանները, պետք է փաստենք, որ առաջին արդյունքները գոհացուցիչ են եղել. հեկտարից ստացվել է միջինը 20.0 ցենտներ, իսկ առանձին հատվածներում՝ միջինը 25.0 ցենտներ բերք:

Առաջիկայում, բարենպաստ եղանակային պայմանների առկայության պարագայում, բոլոր շրջաններում կմեկնարկի բերքահավաքի գործընթացը:

**- Բերքահավաքի շեմին բավականին աճել է վառելիքի գինը: Ինչպե՞ս կմեկնաբանեք այս հանգամանքը: Արդյո՞ք գյուղացիներն այս իրավիճակում վնասներ չեն կրելու եւ արդյո՞ք ձեռնարկվում են քայլեր նրանց բեռը թեթևացնելու համար:**

- Ինչպես գիտենք, մեր հանրապետությունում վաճառվող նավթամթերքի արժեքի ձեւավորման վրա ազդեցություն են ունենում տարբեր հանգամանքներ, որոնք հիմնականում մեզանից կախված չեն: Որպես հետեւանք, նավթամթերքի արժեքի բարձրացմանը զուգընթաց բարձրանում է նաեւ բոլոր մատուցվող ծառայությունների արժեքը, այդ թվում

նաեւ՝ գյուղատնտեսական ծառայությունների: Իհարկե, գյուղատնտեսությամբ զբաղվողները որոշակի վնասներ կրելու են, սակայն ԱՀ կառավարությունը գյուղատնտեսության իրականացնելով բազմաթիվ պետական աջակցության ծրագրեր, հնարավորինս փորձում է մեղմացնել այդ բացասական ազդեցությունը:

**- Պատերազմից հետո՝ նախորդ տարում կրճատվել էր հացահատիկային մշակաբույսերի ցանքսի ծավալները: Նախորդ տարվա համեմատ՝ այս տարի ինչպիսի՞ դինամիկա է գրանցվել: Ձեռնարկվե՞լ են արդյո՞ք խթանող եւ օժանդակող միջոցառումներ:**

- Նախորդ տարվա համեմատ, հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածքները նվազել են ավելի քան 15 %-ով: Ցանկել է ցորեն, գարի, տրիտիկալե, հաճար, եգիպտացորեն:

Ցանքատարածքների կրճատումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հողօգտագործողները առկա վարելահողերի մի մասը թողել են սեւ ցելի տակ: Դա, ինչպես գիտենք, իրականացվում է հողի բերրիությունը բարձրացնելու նպատակով՝ հետագայում ավելի բարձր բերքատվություն ապահովելու ակնկալիքով:

Վարելահողերի մի մասն էլ ընգրկվել է կերային մշակաբույսերի ցանքսի տակ:

**- Մեզ հասած տեղեկություններով, բազմաթիվ քաղաքացիներ կառուցել են ջերմոցներ առանց չափանիշներին հետեւելու, ինչի հետեւանքով դրանք վնասվել են: Նախարարությունը հետեւողապահ էր այս աշխատանքները կազմակերպելու հարցում:**

- Ջերմոցային տնտեսությունների կառուցման ծրագիրը մեկնարկել է 2021 թվականի երկրորդ կեսից եւ շարունակվում է նաեւ ընթացիկ տարում: Արցախի հողօգտագործողներին լրացուցիչ թղթաբանական քաջշունչներից ազատելու նպատակով սկզբնական շրջանում ջերմոցների կառուցման համար հստակ չա-

փորոշիչներ չեն սահմանվել: Բայց արդեն ծրագրի իրականացման ընթացքում, չարաշահումներից խուսափելու նպատակով, նախարարությունը սահմանել է մի շարք սահմանափակումներ եւ պայմաններ: Հաջորդ տարի ջերմոցների կառուցման ծրագրի արդյունավետությունը էլ ավելի բարձրացնելու նպատակով նախատեսվում են որպես պարտադիր պայման սահմանել ՆՏՓ կազմումը եւ շինարարական նորմերի խիստ պահպանումը:

**- Պատերազմից հետո արդյունավետ եւ բարձր բերքատվություն ապահովելու համար սկսվեցին կիրառվել մեծ ծավալով ջերմոցներ, ինչպես նաեւ բարելավվել արտադրությունը: Արդարացի՞ն է արդյո՞ք այս մոտեցումները բերքատվության աճ ապահովելու հարցում: Որքա՞ն է այդ միջոցներով ստացված բերքի տեսակարար կշիռն ընդհանուր բերքատվության ծավալում:**

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ջերմոցների կառուցման ծրագիրը մեկնարկել է 2021 թվականի երկրորդ կեսից, արդյունավետության մասին ճիշտ կլինի խոսել մի փոքր ավելի ուշ՝ երեւի տարեվերջին, համապատասխան վերլուծություններ կատարելուց հետո: Արտոների վերաբերյալ նշեմ, որ «Արցախի Հանրապետությունում անասնաբուծության կանոնակարգման եւ արտադրության կառավարման ծրագրի» շրջանակում, որը մեկնարկել է դեռեւս 2018 թվականին, ընթացիկ տարում նախատեսվում է թվով 3 համայնքներում իրականացնել 60 հա արտադրություն մակերեսային բարելավման, 3600 մետր միջոցառման ճանապարհների մաքրման եւ 2100 մետր փշալարապատման աշխատանքներ: Դա հնարավորություն կտա բարձր պայմաններում արածեցնել եւս մոտ 1200 գլուխ անասուններ:

**- Ինչքանով է հաջողվել վերացնել պատերազմի հասցրած վնասները: Արդյո՞ք ամբողջությամբ ավարտվե՞լ է**

**վնասների գնահատումն ու տուժած քաղաքացիների փոխհատուցման գործընթացները:**

«2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձագործված պատերազմական գործողությունների հետեւանքով նյութական վնաս կրած ֆիզիկական եւ իրավաբանական անձանց պետական ֆինանսական աջակցության միջոցառման» իրականացման կարգի շրջանակում կորուսված գյուղատնտեսական գույքի վերաբերյալ վարչակազմերի կողմից Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն է ներկայացվել ավելի քան 13 000 շահառուների ցանկ, որի հիման վրա մեկնարկել է կորուստների վերաբերյալ տեղեկանքների տրամադրման գործընթացը:

Սույն թվականի փետրվարի 24-ին ԱՀ գյուղատնտեսության նախարարությունում իրավիճակը ընդլայնված խորհրդակցության ժամանակ որոշում է կայացվել գյուղատնտեսական գույքի կորստի դեպքերով անճշտություններից եւ անհամապատասխանություններից խուսափելու նպատակով համայնքներում ստեղծել համայնքային հանձնաժողովներ՝ բաղկացած համայնքի ղեկավարից, ավագանու անդամներից, համայնքը սպասարկող անասնաբույժից ու գյուղատնտեսից եւ ներկայացնել վերաճշտված տեղեկություններ:

Արդյունքում, տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ ի սկզբանե ներկայացված ցուցանիշներում. կորուսված անասնազվաքանակի թվերի, պտղատու այգիների տարածքների եւ գյուղտնիկային քանակների մասով կատարվել են եւ կրճատումներ, եւ ավելացումներ: Ճշտման գործընթացը դեռեւս շարունակվում է:

Ինչ վերաբերում է փոխհատուցումներին, ապա այս լիազորությունը վերապահված է այլ պատկան մարմնի՝ ԱՀ նյութական վնասների հարցերի կոմիտեին:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Նոր մարտահրավերներին համահունչ՝ մեր քաղաքականությունը պետք է փոփոխության ենթարկվի

Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Լեռնիկ Յովհաննիսյանը պատասխանում է «Ապառաժ»-ի հարցերին:

**- Հետպատերազմյան շրջանում ինչպե՞ս եք պատկերացնում Արցախում տարվող մշակութային քաղաքականությունը, այն ի՞նչ փոփոխություններ է կրել:**

- Բնականաբար, Արցախի բնականոն մշակութային կյանքը 44-օրյա պատերազմից հետո զգալի փոփոխություններ կրեց, նաեւ առաջացան նոր մարտահրավերներ, հատկապես՝ մշակութային ժառանգության պահպանման հետ կապված: Մենք նյութական եւ ոչ նյութական մշակութային ժառանգության լուրջ կորուստներ կրեցինք: Մոտ 2000 մշակութային հուշարձաններ մնացին թշնամու կողմից օկուպացված տարածքներում, միեւնույն ժամանակ մենք նաեւ լուրջ կորուստներ ունեցանք ոչ նյութական մշակութային ժառանգության ասպարեզում, երբ օրինակ ամբողջական շրջան իր պատմական լանդշաֆտով, ուրույն կենցաղով, մշակույթով, ենթաբարբառով (պատմական Դիզակ գավառը՝ Յադրութի շրջանը) մնաց թշնամու օկուպացիայի տակ: Ոչ պակաս ինքնատիպ էր նախկին Վարանդա գավառի վերին ենթաշրջանը, հատկապես նրա նախկին կենտրոն Ավետարանոց գյուղն իր շրջակայքով, նաեւ Շուշի քաղաքը: Այն նույնպես շատ հետաքրքիր պատմական լանդշաֆտ ունի, իր ուրույն սովորույթներով, իր պատմամշակութային ժառանգությամբ: Սա լուրջ կորուստ էր Արցախի համար, եւ մենք պետք է համապատասխան քայլեր ձեռնարկենք գոնե ինչ-որ չափով այդ հուշարձանները, մշակութային ժառանգությունը փրկելու համար:

**- Իսկ որո՞նք են այդ քայլերը:**

- Նյութական մշակութային ժառանգության հետ կապված՝ օկուպացված տարածքներում ոչ միայն միջնադարյան եկեղեցիները, վանական համալիրները, մատուռները, գերեզմանոցները, տապանաքարերը, խաչքարերը, բերդ-ամրոցները, կամուրջներն են ենթարկվում վանդալիզմի ու ոչնչացման, այլ նաեւ համեմատաբար նոր կառուցված հուշարձանները, մասնավորապես՝ Յայրենական Մեծ պատերազմի զոհերին եւ Արցախյան առաջին պատերազմում զոհված ազատամարտիկներին նվիրված հուշահամալիրները: Մենք այդպիսի հուշարձանների հիմնահատակ ոչնչացման եւ վանդալիզմի բազմաթիվ փաստեր ունենք:

Մենք պետք է ամեն ինչ անենք, որ միջազգային հանրությունը Ադրբեջանին զսպելու քաղաքականություն վարի: Մինչեւ հիմա, բացի մի քանի ոչինչ չասող հայտարարություններից, գործնական քայլեր չեն ձեռնարկվել: Արցախի իշխանությունների կողմից որոշակի քայլեր ձեռնարկվում են, որպեսզի կարողանանք այդ ամենին ինչ-որ չափով հակազդել եւ քանդման ու պղծման ընթացքը կանգնեցնել:

**- Ինչքանով է ուսումնասիրված օկուպացված տարածքների նյութական ժառանգությունը, արդյո՞ք ունենք կորսված բոլոր պատմամշակութային հուշարձանների տվյալները:**

- Այո, հուշարձանների բոլոր պետական ցուցակներն առկա են: Հուշարձանների հայտնաբերումը եւ վկայագրումը շարունակական գործընթացներ են: Վերջին 30 տարվա ընթացքում հնարավորինս այդ ուսումնասիրությունները կատարել ենք: Իհարկե, չենք ավարտել, բայց հիմնական մասը վկայագրված, պահպանական գոտիները կազմված են: Մինչեւ 2017թ. 4112 հուշարձանի վկայագրում ենք կազմել: Այդ գործընթացը շատ ավելի վաղ է սկսվել, իսկ 2009թ. նաեւ սկսվել է պահպանական գոտիների կազմումը: Մոտ 1400-ից ավելին կազմված են, որը բավականին պատկառելի թիվ է:

Այսօր հիմնական խնդիրն այն է, որ կարողանանք օկուպացված տարածքների հուշարձանների մասին տեղեկատվություն տանք: Տարբեր սոցկայքերից իմանում ենք, թե ինչպիսին է իրավիճակը օկուպացված տարածքներում, տեսնում ենք պղծման, քանդման, վանդալիզմի տեսարաններ եւ նաեւ հուշարձանների ուղղափառացման դեպքեր, մասնավորապես՝ Շուշի քաղաքի

եկեղեցիների, որը ոչ պակաս վտանգավոր է, քան միջնադարյան մեր մյուս հուշարձանների աղվանացման գործընթացը: Դրա համար Ադրբեջանն օգտագործում է իր ազգային փոքրամասնություններից ուղիներին: Դա իրենց քաղաքականության այն մասնիկն է, որն սկսել են դեռեւս 1960-ական թվականներից:

**- Մոտ երկու տարի պաշտոնավարել եք՝ որպես նախարար, նաեւ որոշ ժամանակ փոխնախարար էիք: Ի՞նչ կիսատ թողած գործ ունեք, որ հիմա շարունակում եք:**

- Մշակութային քաղաքականությունը չընդհատվող, շարունակական գործընթաց է: Այսօր մարտահրավերները փոխվել են, եւ հիմնական խնդիրը մեր մշակութային ժառանգության պահպանության, ուսումնասիրության հետ է կապված: Նաեւ մենք պետք է կարողանանք ճիշտ ներկայացնել մեր մշակութային ժառանգության հետ կապված իրավիճակն աշխարհին: Այսօր համաշխարհային հանրությունը որոշակի անտարբերություն է ցուցաբերում, միաժամանակ Ադրբեջանը բավականին ակտիվ քարոզչություն է ծավալում, խոսում այն մասին, թե իբր այստեղ շատ քիչ բնակչություն է մնացել, թե Լեռնային Ղարաբաղի հարց գոյություն չունի: Սա, բնականաբար, իր որոշակի ազդեցությունն է թողնում:



ճիշտ, համարժեք քաղաքականությամբ պետք է հակազդել այդ ամենին, որպեսզի կարողանանք համաշխարհային հանրությանը ներկայացնել, որ այստեղ մարդիկ ապրում, արարում են, ունեն իրենց ուրույն մշակույթը, որը հայկական մշակույթի մի մասն է կազմում եւ կրում է այն հայկական ինքնատիպ արժեքամակարգը, որը համայն քրիստոնյա աշխարհի մի մասնիկն է:

**- Մասնագիտության բերումով շատ եք ուսումնասիրել Արցախի տարածքում գտնվող հուշարձանները, չափազրել դրանք: Կմտածե՞ի՞ք, որ դրանք մի օր կկորցնենք:**

- Անկեղծ ասած, հիմա կարծես թե վատ երազի մեջ լինենք: Ոչ միայն մեր կողմից, այլ ընդհանրապես մեր մասնագետների կողմից թշնամու օկուպացիայի տակ գտնվող տարածքներում կատարված աշխատանքները հիմա մեծ արժեք են ներկայացնում: Դրանք այն վավերագրերն են, որոնք այսօր Ադրբեջանի կողմից տարվող քաղաքականությանը հակազդելու լուրջ գեղեցիկ են: Այսօր այդ աշխատանքը մեծարժեք նյութ է պարունակում իր մեջ, եւ մենք ջանասիրաբար պետք է պահպանենք, որպեսզի այդ տարածքների ազատագրումից հետո կարողանանք պատմաճարտարապետական հուշարձանների նախկին տեսքը վերականգնել:

**- Ընդհանրապես մի բան կորցնելուց հետո ավելի ես արժեւորում: Այս առումով՝ արդյո՞ք մեր վերահսկողության տակ մնացած հուշարձանների նկատմամբ վերաբերմունքը փոխվել է, արդե՞ս այլ աչքով ենք սկսել նայել դրանք:**

- Անկեղծ ասած, մենք միշտ էլ մեկ աչքով ենք նայել, ուղղակի որոշ դեպքերում այդ հուշարձանների նկատմամբ հասարակությունը, նաեւ տեղական ինքնակառա-

վարման մարմինները որոշակի անտարբեր վերաբերմունք ունեն: Մենք պետք է ավելի արժեւորենք մեր հուշարձանները եւ պահենք-պահպանենք դրանք: Վերականգնման, ուսումնասիրման, տարբեր գործառնությունների հետ կապված քայլեր կատարվում են, որոնք մեզ չեն գոհացնում: Չպետք է մոռանալ նաեւ, որ տարբեր ուսումնասիրություններ իրականացնելու համար կան լուրջ անվտանգային խնդիրներ, սահմանամերձ գոտում հայտնված որոշ վայրերում հնագիտական, գիտահետազոտական աշխատանքներ կատարելը որոշակի ռիսկայնություններ է հարուցում: Սրանք մեկը մյուսի հետ փոխկապակցված խնդիրներ են, որոնք պետք է ժամանակի ընթացքում կարգավորենք:

Հովանավորչական միջոցներով այժմ վերանորոգվում են Ամարասի վանքը, Երիցմանկանց վանքը, այս տարվա մեր ծրագրում ներառված են Բովուրխանի վանական համալիրի շինարարական աշխատանքները, նաեւ կատարվելու են նոր պահպանական գոտիների, նոր հուշարձանների վկայագրման աշխատանքներ: Սրանք շարունակական բնույթ են ունենալու. պետք է նոր մարտահրավերներին համաշունչ մեր քաղաքականությունը որոշակի փոփոխության ենթարկվի:

**- Մի ժամանակ «կորուսյալ հայրենիք» ասելով նկատի ունեինք Արեւմտյան Հայաստանը, հիմա այդ կարգավիճակում նոր վայրեր են հայտնվել: Դուք ծնունդով Զարին տակից եք. ի՞նչ զգացողություն եք ունենում ամեն անգամ Ձեր հայրենի գյուղի մոտով անցնելիս:**

- Անկեղծ ասած, չեմ կարող բառերով բացատրել այն ապրումները, որ մենք ունենում ենք: Հայրենագրկումից ծանր բան չկա: Դրանք մարդկային անբացատրելի ապրումներ են. կյանքը լրիվությամբ փոխվում է: Բայց այն զգացողությունն ունեմ, որ մի օր վերադառնալու ենք:

**- Շատերը Ձեզ գիտեն՝ որպես պատմաբան, մի մասը՝ որպես դաշնակցական, նախկին նախարար, պատգամավոր: Դուք ձեզ ինչպե՞ս կներկայացնեիք:**

- Ես միշտ հպարտանում եմ իմ մասնագիտությամբ՝ ազգագրությամբ: Կարծում եմ, որ որպես մասնագետ ամենամայուն գործերն արել եմ որպես ազգագրագետ՝ թե Արցախի հանրայինում վարելով «Մեր երկիր» հաղորդաշարը, թե բավականին երկար ժամանակ ուսումնասիրելով, վկայագրելով մեր հուշարձանները, թե մասնակցելով տարբեր գիտական ծրագրերի:

**- Իսկ ո՞րն եք համարում Ձեր ամենակարեւոր առաքելությունը:**

- Ամենակարեւոր առաքելությունն է պահպանել մեր պապերի, մեր նախորդ սերնդի թողած արժեքամակարգը, պատմական ժառանգությունը, մեր ազգային ինքնության կարեւորագույն հարացույցները: Կարեւոր է, որպեսզի կարողանանք ազատության, անկախության այն տեսլականը, գաղափարները, որոնք մեզ ավետել են մեր նախորդ սերունդները, ճիշտ ձեռով մատուցել մատաղ սերնդին, եւ մեր գործունեությամբ մատաղ սերնդին փոխանցենք այն հսկայական մշակութային ժառանգությունը, որն ստեղծվել է մեր երկրում:

**- Ի՞նչ գիրք է հիմա Ձեր սեղանին:**

- Ճիշտն ասած, միշտ երկու-երեք գիրք եմ կարդում: Այս պահին սեղանիս է Ռուբեն Գալչյանի «Ադրբեջանական պատմաշխարհագրական գեղծարարությունները» գիրքը է, որը վերընթերցում եմ:

**- Ձեր կյանքի ամենատխուր օրը:**

- 2020թ. շատ տխուր օրեր եմ ունեցել, բայց երեւի ամենատխուր օրը, երբ հայրենի գյուղս բռնազավթվեց թշնամու կողմից:

**- Ձեր նշանաբանը:**

- Ազատ, անկախ եւ միացյալ Հայաստան:

**- Ի՞նչն է Ձեզ հիմա ոգեւորում:**

- Հիմա ոգեւորության շատ քիչ առիթներ կան, չեմ կարող ասել:

Հարցազրույցը՝ Տարեւիկ ԱՂԱԶԱՆՅԱՆԻ

### Արամ Մանուկյանը՝ «նշածող»

2018թ. հեղափոխությունից առ այսօր ՀՀ պաշտոնական ուղերձներում ուշագրավ էպոպեա է ունեցել Արամ Մանուկյանի բնութագրությունը: Այս էպոպեան պատմական գնահատականների պարզ շարան չէ, այլ արտացոլում է իշխանությունների գաղափարաքաղաքական հայացքների փոխակերպության (մետամորֆոզ) մի ամբողջ հոլովույթ, որն իր մեջ պարունակում է եական ազդանշաններ:


Ահա այսպես. 2018թ. Հայաստանի Հանրապետության եւ Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակի առթիվ ՀՀ վարչապետի շնորհավորական ուղերձում Նիկոլ Փաշինյանը իրավացիորեն եւ ազգային բարձր գիտակցության ցուցաբերմամբ աշխարհին հայտարարում էր. «...Հայ ժողովուրդը հաղթեց, որովհետեւ ուներ Արամ Մանուկյանի պես նվիրյալ առաջնորդ... Հայ ժողովուրդը հաղթեց, որովհետեւ ուներ այնպիսի գորահրամանատարներ, ինչպես Թովմաս Նազարբեկյանը, Դրոն, Մովսես Սիլիկյանը, Դանիել Բեկ-Փիրումյանը...»: Այդ ժամանակ Փաշինյանը ՀՀ առաջին դեմքն էր, ով հաջորդում էր հաղթանակի սիրանքով եւ դրա պահպանման առաքելությամբ հատկանշվող «նախկին» երեք ղեկավարներին:

2019թ. Հանրապետության տոնի առթիվ շնորհավորական ուղերձում Փաշինյանը «Արցախը Հայաստան է ու վերջ» քաղաքական իր դիսկուրսի համար կարծես փորձում էր հարմար հող նախապատրաստել՝ հետեւյալ ձեւակերպմամբ. «...Հանգչեք խաղաղությամբ, Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաբաղի հերոսամարտը կերտած հրամանատարներ, պետական այրեր՝ Արամ Մանուկյան...», որովհետեւ ձեր սիրանքը, ձեր գործը տեր ունի այսօր...»:

Այդ տարի Փաշինյանի նշված դիսկուրսին գումարվեց նաեւ ՀՀ պաշտպանության նախարարի «նոր պատերազմ՝ նոր տարածքներ» խոսույթը եւ մատուցվեց Ադրբեջանին՝ որպես մեծագույն պատրվակ բանակցային գործընթացի կասեցման եւ ռազմական գործողությունների մեկնարկի համար: Այնուհետեւ Փաշինյանը, թերեւս զգալով եւ նախատեսելով մեծագույն պատրվակի վտանգավոր հետեւանքները, Հանրապետության տոնի առթիվ իր 2020թ. շնորհավորական ուղերձում այսպես էր ասում. «...Պետք էր ոտքի կանգնել՝ ուժերի գերլարումով դիմակայելու մահաբեր գրոհին: Եվ հենց Արամ Մանուկյանը դարձավ հայության ոգու, կամքի ու ուժի մարմնավորումը»:

«Մահաբեր գրոհ» ասելով՝ Փաշինյանն արդյո՞ք գուշակում էր ահավոր պատերազմը եւ Արամի կերպարում էր փնտրում ինքն իրեն: Նման մի ամբիցիոս համեմատության համար, իհարկե, մեղադրելի չէ Փաշինյանը:

Մեղադրելի են, սակայն, նրա իշխանությունները ավանտյուրիստական խոսույթներով թշնամու հարմարագույն պատրվակները մատուցելու համար: Պատրվակներ, որոնց մատուցելուց ամեն կերպ խուսափում էր Արամ Մանուկյանը, եւ դրանց փոխարեն, առանց «խաղաղության դարաշրջան» հորջորջելու, ճկունությամբ բանակցում էր վաղեմի թշնամու հետ՝ վերջիններիս Վանի հերոսամարտի եւ Սարդարապատի ճակատամարտի փոխվրեժի մտադրություններից զերծ պահելու հստակ օրակարգով:



2021թ. Հանրապետության տոնի առթիվ շնորհավորական իր ուղերձում՝ արդեն ահավոր պարտության իրավիճակում հայտնված վարչապետի պաշտոնակատար Փաշինյանն այսպես էր ասում.

«...Սակայն ժողովրդի ուժերի գերլարումով, Արամ Մանուկյանի ոգու եւ կամքի առաջնորդությամբ հայությունը կարողացավ կանգնեցնել թշնամու գրոհը...»:

Այնհայտ է, որ «թշնամու գրոհը կանգնեցնել» ասույթով Փաշինյանը փորձում էր մի կերպ պատճառաբանել իր այն պնդումը, թե 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ պայմանավորվածությամբ է միայն հնարավոր դարձել «կանգնեցնել» ադրբեջանական գրոհը Ստեփանակերտի ուղղությամբ... Այնհայտ է նաեւ, որ Արամ Մանուկյանի անբիծ, անբասիր կերպարի հետ դարձյալ ինքն իրեն համեմատելով՝ Փաշինյանը փորձում էր փոխաբերական իմաստով հիմնավորել «պատասխանատու եմ, բայց մեղավոր չեմ» իր երկչու ինքնարդարացումը:

Այնուամենայնիվ, վերը նշված ուղերձում Փաշինյանն ակնածանքով է հիշատակել Արամ Մանուկյանի «ոգու եւ կամքի առաջնորդ» լինելու փաստը՝ ինչն արդեն բացակայում էր այս տարվա՝ 2022թ. շնորհավորական ու-

ղերձում. «...Սակայն մեր ժողովուրդը կարողացավ օրհասական պահին գործել որպես մեկ բռունցք՝ ուժերի համախմբմամբ, միասնականությամբ կերտել Առաջին Հանրապետությունը: Այդ գործում անուրանալի է Արամ Մանուկյանի, Թովմաս Նազարբեկյանի, Մովսես Սիլիկյանի, Դրոնի, Նժդեհի, Դանիել ու Պողոս Բեկ Փիրումյանների, եզրիական հեծյալ ջոկատի հրամանատար Ջհանգիր աղայի, զենքը ձեռքին կռվող հոգեւորականների դերը...»:

Այս տարի միայն եւ միայն՝ «անուրանալի դեր»... Բա ի՞նչ եղան նա-

ով երկու անգամ հայ ժողովրդի ազգային ինքնորոշման իրավունք է իրացրել, առաջինը՝ Վանում, 1915թ., երկրորդ անգամ՝ Հարավային Կովկասում, 1918թ.:

Արամ Մանուկյանը ժողովրդի այն եզակի առաջնորդն է, ում շնչի եւ ոգեղեն ներկայության ներքո երկու անգամ պարտադրվել է Օսմանյան կայսրությանը՝ պաշտոնապես ճանաչել Հայաստանի գոյության փաստն ու անկախության իրավունքը, առաջինը՝ 1918 թվականին Բաթումիում, դե ֆակտո եղանակով, երկրորդ անգամ սեփական զոհաբերությամբ հիմնադրած Հայաստանի Հանրապետության դիվանագիտական պատվիրակության միջոցով՝ 1920 թվականին, Փարիզի խաղաղության վեհաժողովում, դե յուրե եղանակով:

Ահա թե ով է Արամ Մանուկյանը. Հայ ազգի առաջնորդ, ով եզակի է Հայոց պատմության մեջ...

Թշնամու առաջնորդ, ով սույնպես եզակի է Թուրքիայի պատմության մեջ:

Նրան փայլուն գիտեն Թուրքիայի պետական այրերը եւ նրան լավապես ճանաչեցրել են իրենց կրտսեր եղբոր՝ «Ադրբեջանի Հանրապետության» ղեկավարներին:

Այսօրյա քաղաքական բառապաշարով ասած՝ Արամ Մանուկյանը հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքի, անվտանգության, հողային ամբողջականության սկզբունքների պահպանման խորհրդանիշն է, անկյունաքարը, եթե կուզեք՝ նշածողը:

Արամը, իհարկե, քաղաքական նշածող է: Կարելի է պատկերացնել, որ եթե ՀՀ իշխանությունն այսօր վարի ազգանպաստ, ուժեղ քաղաքականություն Արցախի ինքնորոշման սկզբունքի դիրքերից, ապա Հայաստանի անկախության ուղերձներում Արամ Մանուկյանը կբնութագրվի՝ որպես հայ ժողովրդի ուժն ու կամքը մարմնավորող նվիրյալ առաջնորդ:

Իսկ հակառակ դեպքում, եթե ՀՀ իշխանությունն այլեւայլ պատճառաբանությամբ ուզում է հրաժարվել Արցախի ինքնորոշման սկզբունքից կամ այս սկզբունքը ստորադասել «անվտանգության» առասպելին, ապա Հայաստանի անկախության ուղերձում Արամ Մանուկյանի դերը սահմանափակվում, դառնում է ընդամենը «անուրանալի», այն էլ միայն եւ միայն «Առաջին Հանրապետության» կերտման գործում:

Արամ Մանուկյանի մասին պաշտոնական բնութագրման փոխակերպության էպոպեան որպես ազդանշան լավապես ընկալելի են Թուրքիայի եւ Ադրբեջանի համար:

Ահա թե ինչպես նաեւ կարելի է ապակողովորել՝ «նշածողի իջեցում» բառակապակցությունը...:

Կարեն ԽԱՆՆԱՐՅԱՆ